


1662-1668

17 1234
4-64



101

783
172

9069 NH


8

10

2

11


636



ՏԱՍՆԵՐԿՈՒ ԴԱՍԵՐ

ՎԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ

ՅՈՒՑՆԵԼՈՒ ՎՐԱՅ



Գրեց Ճ. Թ. ԱՆՁԵԼ



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԻԿՈՍԻՆ

—
1910

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԴՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինաննըլար Եօգուցու, Կ. Պոլիս

6471-57

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԴԱՍԵՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ

8 ՈՒ 8 ՆԵԼՈՒ ՎՐԱՅ

Ա. ԴԱՍ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՆԳԱԿԸ

[Նախակրթաբանի ուսուցիչներ կարդան աշակերտներուն]

Գեղեցիկ պատմութիւն մը կայ, թէ հտալիոյ հին քաղաքներէն մէկուն մէջ թագաւորը զանգակ մը կախել տուաւ հանրային հրապարակներէն մէկուն աշտարակին մէջ եւ զանիկա «Արդարութեան Զանգակ» անուաննեց : Եւ հրամայեց թէ ով որ անիրաւութիւն կրած է, երթայ եւ հնչեցնէ զանգակը, եւ այսպէս քաղաքին դատաւորին դիմէ եւ խնդրէ ու ընդունի արդարութիւն :

Երբ ժամանակ մը ետքը զանգակին չուանին վարի ծայրը մաշեցաւ, անոր կապուեցաւ վայրի որթի ճիւղ մը զայն երկնցնելու համար : Օր մը ծեր եւ անօթի ձի մը որ

իր տէրոջմէն թողուած էր մեռնելու համար, թափառեցաւ աշտարակին մէջ, եւ երբ կը ջանար որթը ուտել, հնչեցուց զանգակը : Եւ քաղաքին դատաւորը երբ եկաւ հասկնալու համար թէ ով էր զանգակը հնչեցնողը, հոն գտաւ այս ծեր եւ անօթի ձին : Իր առջեւ կանչել տուաւ ձիուն տէրը, որուն ծառայութեան մէջ աշխատեր մաշեր էր կենդանին, եւ հրամայեց թէ քանի որ այս խեղճ ձին հնչեցուցած էր «Արդարութեան Զանգակը,» պէտք է արդարութին եւ իրաւունք ընել անոր, եւ թէ ձիուն կեանքին մնացած մասին մէջ անոր տէրը պէտք է որ անոր հայթայթէ յարմար ուտեստ, ջուր եւ ախոռ :

Մինչեւ իբր վաթսուն տարի առաջ ոեւէ տեղ չկային օրէնքներ որոնցմով պաշտպանուէին պատշաճապէս այս մունջ կենդանիները, որոնք կ'աշխատին մեզի համար եւ կը մեռնին մեզի համար եւ մեր կեանքերը աւելի երջանիկ եւ աւելի օգտակար կ'ընեն : Եւ ուստի չար եւ անողորմ մարդիկ սովոր էին ծեծել զանոնք եւ աշխատցնել անոնց ոյժէն վեր, եւ անոնց քիչ ուտելիք տալ, եւ պատշաճ խնամ չտանիլ անոնց՝ ցուրտ եղանակի մէջ, եւ շատ անգամ անգթութեամբ եւ անիրաւաբար վարուիլ անոնց հետ եւ այսպէս անոնց կեանքերը ապերջանիկ եւ թշուառ ընել : Բայց իբր վաթսուն տարիներ առաջ Անգղիոյ բարի ընակիչներէն ոմանք որոշեցին թէ օրէնքներ պէտք է դնել չարչարուելէ պաշտպանելու համար այս մունջ արարածները : Ուստի այդ նպատակով կազմեցին ընկերութին մը, որ շատ մեծցած ու զօրացած է հիմա : Ուրիշ երկիրներու մէջ բարի մարդիկ տեսնելով Անգղիոյ մէջ այսպիսի ընկերութեան մը կազմուիլը, անոնք ալ սկսան նոյն տե-

սակէ ուրիշ ընկերութիւններ կազմել : Եւ այսպէս այս բարի գործը այնքան յառաջ գացած է , որ այս ընկերութիւնները կազմուած են աշխարհիս գրեթէ մէս մի Քրիստոնեայ երկրի մէջ , Եւրոպա , Ասիա , Աֆրիկէ , Ամերիկա եւ Ովկիանոսի կղզիներէն շատին մէջ :

Եւ հիմա , քանի մը տարիներէ ի վեր , անոն-հուրը ձեռք առած են այս գործը , եւ հարիւրաւոր եւ թերեւս հազարաւոր տղայոց եւ աղջիկներու ընկերութիւններ կազմուած են աշխարհի զանազան մասերուն մէջ , շատը Եւրոպայի մէջ եւ քանի մը հատ Ամերիկայի մէջ , կենդանիները անգիտութեան դէմ պաշտպանելու համար :

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Անգղիոյ մէջ այդ ընկերութիւններէն շատերը կը կոչուին «Ողորմութեան Ակումբներ» , եւ ասոնց պատկանած բոլոր տղաքն ու աղջիկները կը խոստանան ընել ամէն ինչ որ կրնան « կանոնակիները ուստաղանելու համար պահանջանեան գործածելու դեմ , եւ ուստի ու կարողեն , յառաջանել անդինուն գործածելու դեմ : » Եւ այս ընկերութիւններուն պատկանող բոլոր տղաքն ու աղջիկները ունին անդամութեան քարտեր իրենց տուներուն մէջ կախելու համար , որպէս զի այցելուներ տեսնեն թէ անոնք այս ընկերութիւններուն կը վերաբերին : Անոնք ամսօրեայ ժողովներ ունին , ուր կը կարդան , կը լսեն եւ պատմութիւններ կ'ընեն կենդանիներու վրայ , եւ կ'արտասանեն բանաստեղծութիւններ , կ'երգեն երգեր , եւ չափահասներուն կ'ունկընդուեն :

Ֆիլատէլֆիոյ հանրային դպրոցներուն մէջ երեք հազար տղաք այս ընկերութիւններուն անդամ են, եւ անոնցմէ իւրաքանչիւրը ձիու գլխու ձեւով նշան մը կը կրէ, եւ իւրաքանչիւր ընկերութիւն տարբեր գոյնով դրօշ մը ունի. կապոյտ, կեռասագոյն, վարդագոյն, եւայլն : Ուսուցիչները կը հսկեն անոնց վրայ : Եւ անոնք կ'ունենան ժողովներ, որոնց մէջ պատմութիւններ կը կարուցուին բարձրածայն, բերնով ալ կ'արտասանուին, երգեր կ'երգուին եւ ուղերձներ կը խօսուին ուսուցիչներուն եւ ուրիշներու կողմէ : Անոնք ունին ընթերցման սրահ մը, եւ շահեկան գիրքերու մատենադարան մը : Երբեմն քայլ կ'առնեն, երաժշտութեան հետ համաչափ, դպրոցի սրահներուն մէջ եւ երբեմն կ'ունենան Միութեան մեծ ժողով հանրային սրահի մը մէջ, ուր երեւելի մարդիկ կ'երթան եւ ուղերձներ կը խօսին անոնց :

Բայց հաւանօրէն աշխարհիս մէջ տղայոց եւ աղջկանց մեծագոյն ընկերութիւնը Անգղիա կը գտնուի եւ կը կոչուի «Թոչուններու Ընկերութիւն :» Ասիկա կազմուեցաւ պաշտպանելու համար թոչունները եւ անոնց բոյները, բայց չիմա ուրիշ արարածներու համար ալ է : Հիմա աւելի քան 37,000 տղաք ու աղջիկներ այս ընկերութեան կը պատկանին, եւ ամէնն ալ կը խոստանան ժամանակաշրջանու արարածներուն, և պահանջանել երեսն բարեկարգութեանը, բարեկարգութեանը իւրաքանչ յանութ և երբեւ պահանջանել համար բայց ու : Ամէնն ալ կը խոստանան նաեւ ջանալ որ որչափ կարելի է շատ տղաք ու աղջիկներ համոզեն եւ անդամ ընեն «Թոչուններու Ընկերութեան :»

Կ'ըսուի թէ Ամերիկեան Մասաչուսէց նահանգին Քոնֆորտ քաղաքին բնակիչներէն Թհորօ անոն բարի մարդու մը—որ շատ քաղցր էր Աստուծոյ բոլոր անվաս արարածներուն հանդէպ, մինչեւ իսկ ձուկեր կու գային անոր ձեռքին մէջ երբ զանիկա գետը կը խոթէր—մուկի ձագեր կու գային եւ խաղալով կ'ուտէին անոր մատերէն, եւ նոյն իսկ խլուրդներ բարեկամական այցելութիւն կու տային անոր : Ճնճղուկներ անոր ուսերուն վրայ կը թառէին երբ ան կը կանչէր զանոնք : Ֆիպըս թոչունները իրենց բոյները անոր տան քիւերուն մէջ կը շինէին, եւ վայրի կագաւը իր ձագերով կու գար եւ հանդարտօրէն կը կերակրուէր անոր պատուհանին ներքեւ երբ ան կը նստէր եւ անոնց վրայ կը նայէր :»

Ան երբ երկու երեք ամիս անտառներուն մէջ գըտնուեցաւ, վայրի թոչունները սկսան չվախնալ անկէ, եւ կու գային ու կը թառէին անոր ուսին վրայ, եւ երբեմն անոր բրիչին վրայ երբ ան կը փորէր :»

Կարծեմ, եթէ թոչունները քուէարկելու կարող ըլլային, Թհորօն պատուակալ անդամ պիտի ընտրէին «Թոչուններու Ընկերութեան :»

ՔԱՆԻ ՄՐ ՀԱԲՅՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ կրնաս ըսել «Արդարութեան Զանդակ»ին վրայ : Առաջին անգամ ե՞րբ կաղմուեցաւ ընկերութիւն մը կենդանիներ սղաշտպանելու համար, և ո՞ւր : Հիմա այսպիսի ընկերութիւններ ո՞ւր կը գտնուին :

Տղաք և աղջիկներ ե՞րբ սկսան այսպիսի ընկերութիւններ կազմել Անգղիոյ մէջ : Այդ ընկերութիւններէն շատեր ի՞նչ կը կոչուին :

Այդ տղաք ու աղջիկներ ի՞նչ ընել կը խոստանան :

Անոնց անդամակցութեան քարտերը ո՞ւր կը կախուին, և ի՞նչո՞ւ :

Անոնք ի՞նչ կ'ընեն ժողովներու մէջ :

Ֆիլատէլֆիոյ հանրային դպրոցներուն մէջ ո՞րչափ տղաք այս ընկերութիւններուն անդամ են :

Ի՞նչ նշան կը կրեն :

Ի՞նչ դրօշներ ունին :

Ի՞նչ տեղի կ'ունենայ անոնց ժողովներուն մէջ :

Ի՞նչ կրնաս ըսել «Թուչուններու Ծնկերութեան» վրայ :

Ո՞ւր կը բնակէր Թհորո :

Ի՞նչ կրնաս ըսել ձուկերուն և թուչուններուն Թհորոյի հետ բարեկամութեան վրայ :

Եթէ թուչունները կարող ըլլային քուէարկել, ի՞նչ պիտի ընէին թերեւս :

Բ。 Դ Ա Ս

Ի՞նչ կը ՊԱՐՏԻՆՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒԻՆ

[Նախակրթարանի ուսուցիչները կարդան աշակերտներուն]

Անոնք որ կարդացած են Ռոպէնսոն Քրիւզօէի պատմութիւնը, այն նաւաստիին որ նաւարեկութեամբ ինկաւ կղզի մը ուր սպիտակամորթ մարդիկ չէին ընակեր, պիտի յիշեն թէ ան ինչպէս շուտով իրեն ոնկեր ըրաւ

իր հոն գտած այլեւայլ կենդանիները , եւ թէ ի՞նչպէս անոնց օգնութեամբ իր կեանքը պահեց մինչեւ որ ազատուեցաւ : Եթէ մեզմէ մէկը նաւարեկութեամբ ինայ ամայի կղզի մը , ուր կենդանի չի բնակիր , ոչ ձի՝ որ մեզ տանի , ոչ եզ՝ որ մեր տեղը աշխատի , ոչ կով կամ այծ՝ որ մեզի կաթ տայ , ոչ ոչխար՝ որ մեզի բուրդ տայ , ոչ հաւեր՝ որ մեզի հաւկիթ տան , ոչ շուն՝ որ մեր ընկերն ըլլայ եւ պաշտպանէ մեզ գիշերը , ոչ կատու՝ որ պառկի կրակարանին առջեւ , ոչ թոչուններ՝ որ երգեն իրենց երգերը , ոչ ապրող կենդանի՝ որ մեզի ընկեր ըլլայ , ոչ ապրող բանի ձայն՝ ցերեկ կամ գիշեր , այլ ամէն տեղ ամայութիւն եւ լուսութիւն , եւ ուտելու ոչինչ կենայ , բայց միայն այնպիսի արմատներ՝ զորոնք կարենանք հանել երկրէն , եւ չունենանք հագնելու ոչինչ , բայց միայն կեղեններ՝ զորոնք կարենանք հանել ծառերէն , այն ատեն կը գիտնանք թէ որչափ բան կը պարտինք այս արարածներուն , զորոնք Աստուած իր ողորմութեամբ պատրաստած է մեր օգուտին համար : Եւ երբ յետոյ ազատուինք այսպիսի կեանքէ մը , որչափ երախտագէտ ըլլալու ենք Աստուծոյ , զանոնք մեզի տուած ըլլալուն համար , եւ որչափ երախտագէտ անոնց՝ իրենց մեզի մատուցած ծառայութիւններուն համար :

Ուսումնասիրողներ ըսած են թէ եթէ միայն բոլոր թոչունները ջնջուէին , մենք չէինք կրնար ապրիլ երկրիս վրայ , վասն զի միջատները , զորոնք թոչունները կ'ուտեն , պիտի կորսնցնէին բոլոր բոյսերը եւ պիտի կորսուէր բոլոր մարդկային եւ կենդանական կեանքը :

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒԻ ԲԱՐԻՔԸ

Մտածենք թէ ինչ կը պարտինք կենդանիներուն : Անոնցմէ ոմանք , զոր օրինակ կովերը , ոչխարները եւ այծերը , մեզի կը հայթայթեն թէ ուտեստ թէ զգեստ :

Եզր կ'աշխատի մեզի համար , նաեւ մեզի կը հայթայթէ կերակուր եւ զգեստ :

Զիերը , ջորիները եւ էշերը մեզի համար կ'աշխատին իրենց բոլոր կեանքին մէջ մինչեւ ծերութիւն : Ամէն ինչ որ այս կենդանիները կը ստանան փոխարէն իրենց ծառայութիւններուն , է միայն իրենց պարզ կերը եւ ջուր , նաեւ պատսպարան եղանակին դէմ , երբեմն շատ խեղճ , ձմեռուան մէջ ցուրտ՝ եւ ամառուան մէջ տաք :

Շունը իր տէրոջ ընկերը եւ հաւատարիմ բարեկամն է . տէրը թէ աղքատ ըլլայ թէ հարուստ , երբեք չլքաներ զանիկա , անոր կը հետեւի թէ դէպ ի խրճիթ թէ դէպ ի պալատ , եւ փոխարէն կը խնդրէ քաղցր բառեր միայն եւ իր տէրոջ սեղանին աւելորդները :

Կատուն մեր տուները կը պահէ մուկերուն դէմ , եւ մեր տուները աւելի հաճելի կ'ընէ :

Կան կենդանիներու խումբեր որ աշխարհը աւելի հաճելի կ'ընեն , եւ մեր կեանքը՝ աւելի երջանիկ : Անոնք հմայք կ'աւելցնեն մարզագետիններուն իրենց մայելովն ու ճարակելովը եւ խաղաղ գոյութեամբը : Անոնք անտառը հաճելի կ'ընեն իրենց անոյշ երգերով եւ գեղեցիկ փետուրներով : Պայծառ աչքերով կը նային ծառէն , բլուրէն եւ մացառէն : Կը ծածկեն եւ կը լեցնեն վտակները , գետերը եւ լիճերը եւ ովկիանոսը իրենց փայլուն կերպա-

րանքով եւ առատութեամբ : Քանի որ անոնք այսքան բաներ կ'ընեն մեզի համար, մենք ալ պարտիմք ընել ամէն բան անոնց կեանքերը հանգիստ եւ երջանիկ ընելու համար, եւ միշտ անոնց տալ յարմար կերակուր, եւ պատըսպարան, եւ խնամք տանիլ, անոյշ խօսք խօսիլ եւ քաղցր վարմունք ցուցնել անոնց :

Եթէ մենք անգիտարար պատճառ ըլլանք տկար արարածներուն չարչարուելուն, Աստուած, որ ստեղծեց զանոնք, կրնայ ի փոխարէն թողով որ մենք ալ չարչարուինք :

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ լնեն ուսուցիչները]

Եթէ նաւարեկութիւն կրէինք և իյնայինք ամայի կղզի մը, ուր չկայ ո՛չ թռչուն և ո՛չ ապրող արարած, ի՞նչ ուտել պիտի ստիպուէինք, և ի՞նչ պիտի կրնայինք դանել հագնելու համար :

Եթէ երկրիս վրայի բոլոր թռչունները ջնջուէին, ի՞նչ ըսուած է թէ պիտի պատահէր, և ինչո՞ւ :

Ի՞նչ օգուտներ կը քաղենք կովերէն, ոչխարներէն, այծերէն, եղներէն և ձիերէն, և անոնք փոխարէն ի՞նչ կ'ընդունին մեզմէ :

Շունը ի՞նչ կ'ընէ մեղի համար, և ի՞նչ կը խնդրէ փոխարէն :

Կատուն ի՞նչ կ'ընէ մեղի համար :

Բազմաթիւ ուրիշ կենդանիներ մեր կեանքերը ի՞նչ-պէս երջանիկ կ'ընեն :

Մենք ի՞նչ ընելու էինք անոնց համար :

Պ. Պ Ա Ս

Ա Ն Ա Ս Ո Ւ Ն Ե Ր Ը

[Նախակրթարանի ուսուցիչներ կարդան աշակերտներուն]

Ծննդոց առաջին գլխուն մէջ կ'ըսուի թէ Աստուած ստեղծեց անասունները , եւ Ծննդոց ութերորդ գլխուն մէջ՝ թէ Աստուած յիշեց անասունները , ձԴ. Սաղմոսին մէջ՝ թէ «Անիկա անասուններուն համար խոտ կը բուցընէ ,» եւ Ծ. Սաղմոսին մէջ՝ թէ «Իմս են . . . հազարաւոր լեռներուն անասունները :»

Եթէ Աստուած . . . անասունները , եւ Ի՞ո՞ս և Քո՞ո՞ցնէ անասուններուն համար , եւ անո՞ն են հապառառք վաճառքառ անասունները , պիտի չյիշէ՝ զանոնք որ անգիտութեամբ կը վարուին անասուններուն հետ , զանոնք՝ որ օրերով անասունները երկաթուղիններու կը տանին առանց ուտելիքի եւ ջուրի , զանոնք՝ որ կը սպաննեն անասունները մեծ անգիտութեամբ սպանդանոցներու մէջ , զանոնք՝ որ փոքրիկ հորթերը կը զատեն անոնց մայրերէն երբ անոնք շատ պատիկ են դեռ եւ անոնց հետ անգիտաբար կը վարուին , զանոնք՝ որ խոտին ծախքը խնայելու համար իրենց անասուններուն այնքան քիչ կեր կու տան ձմեռը , որ անոնք կէս մը անօթի կը մնան եւ նիհար ու հիւանդոտ կ'ըլլան :

Երբեմն անասունները հազար մահէ աւելի կը կրեն , վասն զի անոնց անողորմ՝ պահապանները ձմեռը բաւա-

կան կեր չեն տար անոնց , եւ անոնք շատ անգամ կը չար-
չարուին ձմեռը , վասն զի իրենց պահապանները չեն պատ-
րաստեր հանգստաւէտ ախոռներ :

Անասուններու եւ ուրիշ կենդանիներու հանդէպ ան-
գթութիւնը զանոնք պահելու կամ սպաննելու մասին , կը
վսասէ անոնց միսին , վասն զի զանիկա կ'ընէ առողջու-
թեան վսասակար եւ երբեմն ալ թունաւոր : Նմանապէս
կրվերու հանդէպ անգթութիւնը յաճախ առողջութեան
վսասակար եւ թունաւոր կ'ընէ անոնց կաթը եւ կարագը
եւ պանիրը , որոնք կը շինուին կաթէն :

Ես պիտի չուզէի ուտել միսը այն կենդանիներուն
որոնք աշխատած , յոգնած են կառքերու լծուելով ճիշդ
իրենց մորթուելէն առաջ , կամ սպաննուած են անգթօրէն,
առաջուընէ գիտնալով թէ պիտի սպաննուին : Անոնք ամէնն
ալ վայրկենապէս սպաննուելու են , կամ հրազէն ուղղե-
լով անոնց գլխուն կամ ուրիշ կերպով , եւ կենդանի մը
պէտք չէ որ տեսնէ ուրիշ կենդանիի մը սպաննուիլը :

Ի՞նչ ՍՈՐՎԵՑՈՒՅՑ ԱԿԱՍԻԶ

Ակասիզ , մեծ ուսուցիչը , սովոր էր իր աշակերտ-
ներուն ըսել որ շուտ սպաննեն մինչեւ իսկ իրենց բռնած
ձուկերը , այն ինչ զանոնք ջրէն դուրս կը հանեն , գաւազա-
նով կամ քարով անոնց գլխուն յետակողմին զարնելով ,
վասն զի այն ձուկերը որ կը մեռնին բռնուելնէն անմիջա-
պէս ետքը , շատ աւելի համեղ են քան անոնք որ կամաց
կամաց կը մեռնին կամ կը չարչարուին մեռնելնէն առաջ :

Ոչ մէկ կենդանի , թոշուն կամ չորքոտանի կամ

Ճուկ , թողուելու է որ ընդ երկար չարչարուի մեռնելէ առաջ , վասն զի ատիկա անգթութիւն է եւ կը վսասէ անոր միսին :

Ես պիտի չուզէի խմել կաթը կովու մը որ վախցած է , կամ ոեւէ կերպով չարաչար գործածուած է , վասն զի անհիկա առողջարար չէ : Պիտի չուզէի խմել կաթը կովու մը որ միայնակ կը պահուի ախոռին մէջ , կամ չընդունիր մաքուր օդ , չընդունիր մարմնամարզ եւ արեւու լոյս : Վասն զի արարած մը որ միայնակ կը պահուի , հաւանօրէն շատ ձանձրոյթ եւ ապերջանկութիւն պիտի զգայ , եւ արարած մը որ օդ , մարմնամարզ եւ արեւու լոյս չի վայելեր , հաւանօրէն վատառողջ կ'ըլլայ եւ անհւղու միսասակար կաթ կու տայ : Եթէ աղէկ կաթ կ'ուզենք , պէտք է որ կովերոն հետ քաղցրութեամբ վարուինք : Ամերիկայի մեծագոյն ագարակատէրներէն մէկը կ'ըսէ թէ « Ինչ ժշու այնողէս +առլցրուեամբ էը իսուն էը կոչեւան ճէս , ”բարեկ” լէ այինուջ ճը ճէս իսուր : » Զենք կրնար անգթութեամբ վարուիլ Աստուծոյ ոեւէ մէկ արարածին հետ , որ մեզի կերակուր կու տայ , առանց մենքզմեզ վսասելու վտանգին :

Եթէ խորհիս թէ անասունները իմացողութիւն չունին , կը սխալիս : Անոնք կը հասկնան թէ զիրենք վարողները ինչ կ'ըսեն իրենց : Անոնք կը հասկնան թէ ինչպէս պաշտպանելու են իրենքզիրենք , երբ իրենց խումբին վրայ կը յարձակին վայրի կենդանիներ , միշտ կեղրոնական տեղը դնելով իրենց ձագերը եւ աւելի տկարները , մինչ աւելի զօրաւորները թշնամին կը դիմագրաւեն իրենց եղջիւրներով : Հարաւային Ափրիկէի մէջ եղ-

ները կը կրթուին ճակատամարտներու մէջ կոռուիլ այս ցեղին կողմէ որու կը պատկանին անոնք : Կովերը մեծ սէր ունին իրենց ձագերուն վրայ : Ամէնէն խելօք կովը կը կոռուի իր հորթին համար : Քանի մը տարի առաջ Հիւսիսային Քոնուէյի մէջ , Սպիտակ Լեռներուն մօտ , կով մը կոռւեցաւ եւ վիրաւորեց եւ վտարեց խոշոր արջ մը որ կը ջանար յափշտակել անոր հորթը :

ՏՂՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մօտերս պատմութիւն մը կարդացի իբր տասնըչորս տարեկան տղու մը վրայ , որ մինչ կը հսկէր կովերը , գայլ մը յարձակեցաւ անոր վրայ : Կովերէն մէկը զանիկա ազատել եկաւ , յարձակեցաւ գայլին վրայ եւ ազատեց տղուն կեանքը : Գիտեմ թէ կովերը երախտագիտութիւն ունին , վասն զի երբ քանի մը տարի առաջ կ'անցնէի արտի մը մէջէ Տորչէսթըր , Պոսթընի մօտ , գտայ կով մը որ ծառի մը կապուած էր երկայն չուանով մը : Արածուելու ատեն չուանը սրունքներուն փաթթուեր էր եւ ինք գետին ինկեր էր , եւ ազատուիլ ջանացած ատեն չուանը աւելի փաթթուեր էր , մինչեւ որ բոլորովին խեղճ վիճակի մը մէջ մնացեր էր կենդանին : Երբ երկար ատեն աշխատելէս ետքը յաջողեցայ քակել չուանը , եւ զանիկա ոտք հանեցի , կովը քովս եկաւ , աչքերուն մէջ անուշ նայուածքով մը , եւ լեզուովը լզեց վերարկուիս թեզանիքը : Երբ տուն գացի , ըսի տնեցիներուն թէ տիկնոջ մը պատահեցայ որ մեծ տագնապի մէջ կը գտնուէր , եւ ազատեցի զանիկա , եւ թէ ան զիս վարձատրեց համբոյրով մը :

Կովերը շատ անգամ կը սորվին իրենց անունները եւ կու գան երբ կանչուին : Ամերիկացի մեծ դիւանագէտն ու ատենաբանը Տանիէլ Ուէպսթըր ճիշդ մեռնելէն առաջ ինդրեց որ բոլոր իր անասունները, զորոնք շատ կը սիրէր, իր պատուհանին առջեւ բերուին, որպէս զի ինք տեսնէր զանոնք վերջին անգամ, եւ երբ անոնք մէկիկ մէկիկ եկան իր պատուհանին առջեւ, անոնց ամէն մէկը կանչեց իր անունով :

Միշտ յիշենք թէ եզները ինչպէս կ'աշխատին մեզի համար, թէ կովերը ինչպէս կաթ, կարագ եւ պանիր կու տան մեզի, թէ այս անխօս արարածները որչափ շատ բան կ'ընեն մեզի համար եւ որչափ քիչ բան կ'ընդունին անոնց փոխարէն, եւ ջանանք ընել ինչ որ կրնանք զանոնք երջանիկ ընելու համար :

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ծննդոց Գիրքին մէջ ի՞նչ կ'ըսուի անասուններուն վրայով :

Սաղմոսներուն մէջ ի՞նչ կ'ըսուի անասուններուն վրայով :

Անասուններուն ի՞նչ կերպերով անգթութիւն կը ցուցուի :

Անասուններուն և ուրիշ կենդանիներու ցուցուած անգթութիւնը ի՞նչ ազդեցութիւն կ'ընէ անոնց միախն վրայ :

Կովերուն ցուցուած անգթութիւնը ի՞նչ ազդեցուածիւն կ'ընէ անոնց կաթին վրայ :

Ի՞նչ կ'ըսուի կենդանիները վայրկենապէս առանց ցաւի մեռցնելու վրայ :

Ակասիս ծուկերուն նկատմամբ ի՞նչ կը սորվեցնէր իր աշակերտներուն :

Ի՞նչ կ'ըսուի ախոռին մէջ միայնակ պահուած կովերուն վրայ :

Ի՞նչ կ'ըսուի առանց մաքուր օդի, մարմնամարդի և արեւու լոյսի պահուած կովերուն համար :

Եթէ աղէկ կաթ կ'ուղենք, ի՞նչպէս պէտք է վարուինք կովերուն հետ :

Ամերիկեան ամէնէն մեծ ագարակապանը ի՞նչ ըսած է իր կովերուն համար :

Ի՞նչ կ'ըսուի անասուններուն իմացականութեան վրայ :

Անասունները ի՞նչպէս կը պաշտպանեն իրենքիրենք վայրի կենդանիներու դէմ :

Եզները ի՞նչպէս վարժուած են Հարաւային Ափրիկէի մէջ :

Ի՞նչ կրնաս պատմել Սպիտակ Լեռներուն մօտ Հիւսային Քոնուէյի կովին վրայով :

Ի՞նչ կրնաս պատմել այն տղուն վրայ, որ յարձակում կրեց գայլէ մը :

Ի՞նչ կրնաս պատմել Պոսթընի մօտ Տորչէսթըրի կովին վրայ :

Ի՞նչ ըրաւ Տանիէլ Ուէպսթըր ճիշդ մեռնելէն առաջ :

Ի՞նչ միտք բերելու ենք և ի՞նչ ընել ջանալու ենք :

642-57

Պ. ՊԱՍ

ԶԻՆ

[Նախակըթարանի ուսուցիչները կարդան աշակերտներուն]

Անգղիա, Լոնտոն մեծ քաղաքին ամէնէն բանով պողոտաներէն մէկուն վրայ ըլուրի մը ստորոտը կախուած է հետագան .

«ԶԻՈՒՆ ԱՂԵՐՍԸ ԻՐ ՎԱՐԻՉԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Բլուրն ի վեր մի խարազաներ զիս ,
 Բլուրն ի վար մի արտորցներ զիս ,
 Ախոռին մէջ մի մոռնար զիս ,
 Իմ խոսս ու դարիս մի գողնար ,
 Մաքուր ջուր ինձի մի խնայեր ,
 Սպնդել և խոզանակել զանց մի ըներ ,
 Կակուղ , չոր անկողինէ մի զրկեր զիս ,
 Երբ հիւանդ եմ կամ պաղ առած՝ մի պաղեցներ զիս ,
 Հարուածով կամ սանձով մի ցնցեր զիս ,
 Եւ երբ բարկանաս , մի ծեծեր զիս :»

Մարդկային սեռը երբեք կարող չէ վճարել ձիուն իր ունեցած պարտքը : Առանց անոր անպիտան են մեր կառքերը , սայլերը եւ բալխիրները ձմեռուան մէջ : Պիտի ստիպուինք եզան կառք նստիլ կամ ոտքով ճամբորդել : Զիեր հիմա կը գտնուին աշխարհիս շատ կողմերը , կ'աշխատին մարդուն ծառայելու համար , եւ փոխարէն կ'ընդունին իրենց պարզ կերը եւ ջուրը միայն , եւ օդին դէմ պատսպարան , երբեմն շատ ցուրտ ախոռներու մէջ ձմեռը

Եւ շատ տաք ախոռներու մէջ ամառը : Արաբիոյ մէջ ձիերը կը բնակին վրաններու մէջ ընտանիքին անդամներուն հետ, եւ մանուկներուն քով կը պառկին, շատ զգուշանալով որ չվսասեն անոնց : Արաբները երբեք չեն ծեծեր զանոնք :

Ձիերն ալ մարդկային էակներու նման երբեմն հիւանդ կ'ըլլան, երբեմն առողջ, երբեմն զօրաւոր՝ երբեմն տկար : Ենէ +առջր Հարճան + աւանք, կ'ապրին երեսուն, քառասուն կամ աւելի տարիներ . բայց, նման մարդկային էակներու, պէտք ունին առատ առողջարար կերի եւ ջուրի, նաեւ կանոնաւոր մարմնամարզի, մաքուր օդի, արեւու լոյսի, եւ մաքուր ախոռներու : Ձիերուն ստամոքսը պզտիկ է, եւ զանոնք առողջ պահելու համար պէտք է յաճախ կերակրել եւ ջուր խմբնել : Եւրոպայի մէջ յաճախ պիտի տեսնէք թէ ձիապանները իրենց ձիերուն հացի կտորներ կու տան :

Կան մարդիկ որ շատ անգութ են իրենց ձիերուն . կը թողուն որ անոնք երկար ատեն առանց կերի ու ջուրի մնան : Կան մարդիկ որ իրենց ձիերուն այնքան քիչ ուտելիք կու տան, որ անոնք շատ կը նիհարնան : Պոսթընի մօտ Մասաչուսէցի մէկ պզտիկ գիւղին մէջ, ուր կը բնակիմ, մարդ մը որ յարգելի կը ցուցնէր ինքզինք, իր խեղճ ձին կէս մը անօթի կը պահէր : Բայց օր մը գեղին տղաքը հինգ հինգ սէնթ (50ական փարա) դրին եւ պարկ մը վարսակ գնեցին եւ այդ գիշեր գացին մարդուն ախոռը եւ խեղճ ձիուն լաւ կեր մը տուին, ու պարկը հոն թողուցին վրան սա պիտակով, «Նուեր անանենեւու հանդէպ անդընեւու արժէւու ընէրունքնեն :» Աղկէ ետեւ խեղճ ձին աւելի աղէկ եղաւ :

Զիերը կը հասկնան երբ իրենք գէշ վարմոնք տեսնեն: Ես սովոր էի ճամբորդել շատ աշխոյժ բայց կատարելապէս անզսաս ձիով մը, որու երբեք զարկած չէի խարազանով: Օր մը երբ ձին կապուած էր դրացիի մը տան մէջ, քանի մը երիտասարդներ խորհեցան թէ լաւ կատակ մը պիտի ըլլայ ձրի ճամբորդութիւն մը ընել: Զին տրամադիր չէր ատոր: Անոնց ըրած առաջին բանն եղաւ անոր զարնել խարազանով: Զին անոնց ուզածէն աւելի արագ վազեց եւ յաշորդ փողոցի անկիւնը տապալեց կառքը եւ պարպեց մէջը գտնուողները, այնուհետեւ քիչ մը հեռու գնաց եւ կեցաւ եւ սկսաւ հանդարտութեամբ ճարակիլ ճամբուն եզերքի խոտերը ուտելով: Այդ երիտասարդները ընդունեցին դաս մը թէ ինչպէս կարեւոր է քաղցրութեամբ վարուիլ մտացի եւ աշխոյժ ձիու մը հետ: Անոնք երբեք պիտի չմոռնան այս դասը:

Ես կը գործածէի ուրիշ ձի մը նոյնքան աշխոյժ որքան այն ձին որուն վրայով խօսեցայ ձեզի, եւ միշտ քաղցրութեամբ կը վարուէի անոր հետ: Օր մը Պոսթընի մօտ վար կ'իջնէր զառիվեր բլուրէ մը, ծանրաբեռնեալ կառքով մը, եւ ահա կոտրեցան երկու անուարգելներն ալ, եւ կառքը ձիուն վրայ եկաւ: Կենդանին կեցաւ անշարժ, գրեթէ վայրկենապէս, եւ կառքը բռնեց մինչեւ որ մէջը գտնուողները ամէնն ալ կրցան դուրս ելլել: Կը կարծէ՞ք թէ եթէ անհիկա սովորած ըլլար խարազանուիլ եւ անգութ վարմունք տեսնել, այդպէս պիտի ընէր:

(Զին պիտի շարունակուի յաջորդ դասին մէջ)

ՔԱՆԻ ՄԵ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ո՞ւր կախուած էր ձիուն աղերսագիրը :

Ի՞նչ էր ձիուն աղերսը :

Ի՞նչ ընել պիտի ստիպուէինք եթէ ձիեր չկենային :

Չիերը ի՞նչ վարձ կ'ընդունին իրենց աշխատութեան փոխարէն :

Արաբիոյ մէջ ձիերը ո՞ւր կը բնակին :

Արաբները կը ծեծե՞ն իրենց ձիերը :

Չիերուն առողջութիւնը և ոյժը կը փոփոխուի՞ մարդուն առողջութեան և ոյժին տէս :

Չիերը, մինչև ո՞րչափ կ'ապրին եթէ քաղցր վարմունք տեսնեն :

Ինչո՞ւ յաճախ կեր եւ ջուր տալու է անոնց :

Եւրոպայի մէջ կառապանները յաճախ ի՞նչ կու տան ձիերուն :

Մասաչուսէցի մէկ գիւղին մէջ տղաք ի՞նչ ըրին այն մարդուն որ իր ձին կէս մը անօթի կը պահէր :

Ի՞նչ կրնաս ըսել այն ձիուն նկատմամբ որ փախաւ :

Ի՞նչ կրնաս ըսել այն ձիուն նկատմամբ երբ երկու անուարգելներ կոտրեցան :

Ե。 Պ Ա Ս

ԶԻՆ (Շարունակութիւն)

[Նախակրթարանի ուսուցիչները կարդան աշխակերտներուն]

Չիու մը մեծ անգիտութիւն կը ցուցնես եղբ անոր գլուխը կը կապես ու դէպ ի ետ կը պրկես սանձով մը,

վասն զի անհիկա ազատ չի կրնար շնչել, չի կրնար քաշել այնքան շատ բեռ, ոչ ալ այնքան դիւրութեամբ։ Շատ ձիեր մեծ ցաւ կը կրեն եւ կը հիւանդնան այս պրկիչ սանձին պատճառաւ։ Եթէ տղայ մը քաշէր կամ հրէր ծանր բալխիր մը կամ ձեռնասայլ մը, բերանը ունենալով կրոնակին վրայ հաստատուած սանձ մը որով անոր գլուխը ետ քաշուի դէպ ի ուսերը, այնպէս որ տղան չկրնայ դէպ յառաջ հակիլ, այն ատեն պիտի հասկնար թէ ձին ինչպէս կը չարչարուի պրկիչ սանձով։ Պրկիչ սանձը, եթէ երբեք հարկ ըլլայ գործածել, միշտ պէտք է այնքան երկայն ըլլայ որ երբ ձին ծանր բեռ մը քաշէ գահաւանդ ըլուրէ մը վեր, կարող ըլլայ իր գլուխը այնքան վար ծուել որքան պիտի ծուէր եթէ պրկիչ սանձ չունենար։ Մեծ Բրիտանիոյ մէջ աւելի քան 500 ձիաբոյժ բժիշկներ պրկիչ սանձերը դատապարտող թուղթ մը ստորագրած են։ Եւ ես կը կարծեմ թէ պիտի գայ ժամանակ երբ բոլոր մեր այր մարդիկը, կիներն ու տղաք այնքան բարեխիղճ պիտի ըլլան հանդէպ ձիերու, որ այլ եւս պիտի չթողուն որ անոնք չարչարուին պրկիչ սանձերով։

Կան մարդիկ, որ երբ իրենց ձիերը ծերանան կամ հիւանդանան կամ կաղանան, զանոնք պզտիկ գումարի մը փոխարէն կը ծախեն անգութ մարդոց, որոնք կը ծեծեն զանոնք, կ'աքացեն զանոնք, անօթի կը թողուն զանոնք, ուրիշ խօսքով, չարաչար կը գործածեն զանոնք, եւ այն ատեն խեղճ ձիերը չարչարանքի կեանք մը կ'անցընեն մինչեւ որ մեռնին։ Կարծեմ թէ լաւ ձի մը, որ հաւատարմաբար գործած է իր տէրոջ համար, հաշելու մաշելու է բայց երբեք ծախուելու չէ։

Զիոն նկատմամբ հինգ ուրիշ բաներ կան զորոնք արժան է ըսել: Առաջին, Զիոն ամէնէն զօրաւոր մասը ուսերուն ճիշդ ետեն է, եւ հեծեալը որ դէպ առաջ կը նստի, իր ձին աւելի քիչ կը յոգնեցնէ քան դէպ ետ նըստելով: Երկրորդ, Երբ ծերութեան պատճառաւ ձիերուն ակոաները պատշաճօրէն չեն ծամեր կերը, յաճախ բարւոք վիճակի կրնան բերուիլ ձիաբոյժ բժիշկներու ձեռքով: Երրորդ, Ճիշդ այնքան անգթութիւն է ձին օրերով փակել ախոռին մէջ առանց մարմամարզի, մաքուր օդի եւ արեւու լոյսի, որքան տղայ մը փակել քանի մը օր տան մէջ առանց մարմամարզի, մաքուր օդի եւ արեւու լոյսի: Զիերը ամէն օր մարմամարզ ունենալու են: Չորրորդ, Զիերը կ'ուզեն ախոռին մէջ իրենց հետ ունենալ ուրիշ ձիեր կամ ուրիշ կենդանիներ, եւ թերեւս գրեթէ լքուած եւ տխուր կը զգան իրենքզիրենք առանց անոնց, ինչպէս տղաք կը զգան երբ ընկերներ չեն ունենար: Հինգերորդ, Մեծ Բրիտանիոյ մէջ փորձերով հասկցուած է թէ այն ձիերը որոնք շաբաթը վեց օր սաստիկ կ'աշխատին՝ շատ աւելի երկար կ'ապրին եւ աւելի գործ կը կատարեն իրենց կեանքին մէջ եթէ թողուի որ հանգստանան ամէն եօթներորդ օր: Ասիկա կը յիշեցնէ ինծի թէ Պոսթընի մօտ իմ մէկ բարեկամս սովոր էր իր ձին վարել ամէն շաբաթ վեց օր դէպ ի երկաթուղոյ կայարանը, եւ եօթներորդ օրը՝ տարբեր ճամբով մը դէպ եկեղեցի: Ժամանակ մը յետոյ ձին սորվեցաւ զայս, եւ ինքնիրեն դէպ ի երկաթուղոյ կայարանը տանող ճամբէն կ'երթար շաբուան վեց օրերը, եւ ամէն եօթներորդ օր՝ դէպ եկեղեցի տանող ճամբան:

Զիերը կը տարբերին իմացականութեան կողմանէ, բայց անոնք ամէնն ալ գիտեն երբ իրենց քաղցր վարմոնք կը ցուցուի, եւ թէ իրենց քաղցրութեամբ կը խօսիք թէ ոչ, եւ ամէնն ալ կ'ուզեն որ իրենց քաղցրութեամբ խօսուի: Կրնայի ձեզի պատմել ճշմարիտ շատ պատմութիւններ ձիերու հետ քաղցրութեամբ վարուելու վրայ, բայց այն ատեն այս Դասը շատ կ'երկարէր: Եթէ կ'ուզէք ձիերուն քաղցր ըլլալ, միշտ մերժեցէք նստիլ կառք մը զոր քաշող ձին հիւանդ է կամ կաղ, եւ կամ եթէ կ'երեւի թէ անիկա քիչ մնունդ ընդունած է եւ տկար:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՅՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ինչո՞ւ անգիտութիւն է ձիուն գլուխը դէպի ի ետ կապել պրկիչ սանձով :

Տղայ մը կրնայ աղէկ հրել կամ քաշել բեռ մը եթէ պրկիչ սանձով ետ քաշուի իր գլուխը :

Պրկիչ սանձը ո՞րչափ ժամանակ պէտք է տեւէ, եթէ գործածուի երեքք :

Երբ ձի մը ծերանայ, կամ հիւանդանայ կամ կաղանայ, շիտակ է զանիկա ծախսել օտարականներու :

Հեծեալ մը որ համետին վրայ դէպ առաջ կը նստի, ձին կը յոգնեցնէ աւելի կամ պակաս քան երբ դէպ ի ետև կը նստի: Ինչո՞ւ :

Երբ ձեր ձիերուն ակռաները գէշնան, ի՞նչ կարելի է ընել անոնց համար :

Պէտք է ձին ախոռի մէջ փակել առանց մարմնամարզի, մաքուր օղի և արեւու լոյսի: Եթէ ոչ, ինչո՞ւ ոչ :

Ինչու ձիերը կ'ուզեն որ ուրիշ կենդանիներ ալ գտնուին իրենց հետ ախոռին մէջ :

Ի՞նչ տեսնուած է Անգղիա, նկատմամբ շաբթուան վեց օրերուն մէջ սաստիկ աշխատող ձիերուն :

Ի՞նչ կրնաս պատմել Մասաչուսէցի այն ձիուն վրայ, որ սովոր էր շաբթուան լուր օրերը երկաթուղւոյ կայտանն երթալ և կիրակի օրերը եկեղեցի :

Զիերը գիտե՞ն թէ ե՛րբ իրենց քաղցրութեամբ կը խօսուի :

Եթէ կ'ուզես քաղցր ըլլալ ձիերուն, միշտ ի՞նչ ընել մերժելու ես :

Զ Ա Յ Ա

Շ Ո Ւ Ն Ը

[Նախակրթարանի ուսուցիչներ կարդան աշակերտներուն]

Յամին 1858 յուղարկաւորութեան թափօր մը մըտաւ Կրէյ Ֆրայէրի գերեզմանատունը, Սկովտիոյ Էտին-պուրկ քաղաքին մէջ : Աղքատիկ մարդու մը յուղարկաւորութիւնն էր այն, եւ դագաղին հետեւողներուն մէջ առաջին սգաւորն էր աղքատին շունը :

Յուղարկաւորութենէն ետեւ այս աղքատին բոլոր մարդկային բարեկամները իրենց տուները գացին, բայց շունը չէր ուզեր թողով իր տէրոջ գերեզմանը : Օր ըստ օրէ մարդիկ կը ջանային շունը հեռացնել անկէ, սակայն կենդանին միշտ նորէն իր տէրոջ գերեզմանը կը վերադառնար : Ի վերջոյ բոլոր քաղաքին մէջ գիտցուեցաւ ա-

սիկա, եւ դրացիները կը կերակրէին շունը եւ անոր պատրսպարան կու տային ցուրտ եղանակին, եւ Լորտ Փրովոսթ, այսինքն քաղաքապետը, անոր տուաւ մանեակ մը, եւ իբր տասնըշորս տարի մինչեւ իր մահը, 1872ին, շունը չժողովոց իր տէրոջ գերեզմանին մերձակաները:

Քանի մը տարի առաջ այն ազնիւ Անգղիացի տիկինը, Պառոնուհի Պըրտըթ Քութս, այս կենդանիին համար մահարձան մը կանգնել տուաւ Կրէյ Ֆրայէրի գերեզմանատան մուտքին մօտ, եւ հաւանօրէն անիկա պիտի կանգնի հարիւրաւոր տարիներ որպէս զի էտինպուրկի ժողովրդին պատմէ այն հաւատարիմ շան պատմութիւնը:

Եւ հիմա տեսնենք թէ շուները ինչ կ'ընեն մեզի համար: Հիւսիսային ցուրտ երկիրներուն մէջ, ուր չկան ոչ ձիեր եւ ոչ եղներ, շուներ կը գործածուին բալիսիր քաշելու համար սառին եւ ձիւնին վրայէն: Ուրիշ երկիրներու մէջ անոնք կը գործածուին գայլեր եւ ուրիշ վայրի կենդանիներ որսալու համար, եւ երբեմն հետապնդելու համար չար մարդիկ որոնք ոճիրներ գործած են: Այնպիսի երկիրներու մէջ ուր բազմաթիւ ոչխարներ կը հանուին, շուները կը պահպանեն ոչխարները, վտարելով բոլոր վայրի կենդանիները:

Մարդկային հազարաւոր կեանքեր ազատած են շուները, կեանքեր մարդոց՝ որոնք ջուրն ինկան եւ պիտի խեղուէին եթէ շուները ջուրը ցատկելով զանոնք դուրս չքաշէին: Օր մը, երբ Լոնտոն կը գտնուէի, ասկէ իբր տասնըմէկ տարի առաջ, մարդ մը ջուրն ինկաւ եւ յատակը իջաւ, եւ բարի շուն մը յատակը իջաւ եւ զանիկա վեր բերաւ եւ ապահով ջուրին եզերքը հանեց: Մեզմէ

ոմանք ստակ տուին այս շան համար գեղեցիկ մանեակ մը գնելու նպատակաւ, եւ անոր վրայ սապէս գրեցինք. «Անդամ Արքանի Բարեւեր Ընկերութեան : » Երբեմն շուները կ'ազատեն նաւարեկեալ նաւազներ, չուաններով կապուած՝ լողալով խորտակուած նաւէն դէպ ի եզրքները :

Շուները ազատած են շատ կեանքեր անձերու որոնք գրեթէ սառած կամ թաղուած էին ձիւնին ներքեւ: Անգամ մը, գիտեմ, երբ երեք փոքր մանուկներ Կլուսէսթըրի մէջ, Մասաչուսէց, դպրոցէն տուն կ'երթային ձեան մեծ փոթորիկի մը ատեն, կորսնցուցին իրենց ճամբան եւ ձիւնով ծածկուեցան, եւ պիտի մեռնէին եթէ բարի շուն մը զանոնք գտած չըլլար :

Նաեւ շուները կը պահպանեն մեր տուները գիշերը երբ մենք ամէսս ալ կը քնանանք, եւ կը վանեն գողերը եւ ուրիշ չար մարդիկը, կամ եթէ չար մարդիկ փորձեն ներս մտնել, շուները կը հաջեն եւ մեզ կ'արթնցնեն: Դեռ քիչ մը առաջ բան մը պատահեցաւ զոր գիտեմ անձամբ: Ամբողջ ընտանիք մը այրուելով պիտի մեռնէր իր տան մէջ, գիշեր ատեն, եթէ շունը չհաջէր եւ չարթնցնէր տնեցիները: Նաեւ պատահեցաւ ուրիշ դէպք մը, որուն մէջ ամբողջ ընտանիք մը պիտի մեռնէր գիշերը ածխային կազէ, որ վառարանէ մը կ'ելլէր, եթէ շունը հաջած եւ արթնցուցած չըլլար զանոնք :

Կան շատ գիրքեր որոնք պատմութիւններով լեցուն են շուներուն ըրած բարի բաներուն վրայ, եւ շատ մը ուրիշ գիրքեր ալ կարելի էր լեցնել նոյնչափ լաւ պատմութիւններով: Անոնք միշտ մարդկային էակներու բարեկամներն ու ընկերներն եղած են, եւ առ հասարակ մա-

Նուկներու շատ քաղցր են երբ քաղցրութիւն կը տեսնեն : Մեծ մատենագիր մը , Քիւվիէ , որ ուսումնասիրած է ամբողջ այս նիւթը , կը կարծէ թէ մարդիկ կրնան ըլլալ առանց ոեւէ ուրիշ կենդանիի , բայց չեն կրնար ըլլալ առանց շուներու :

Շուներ , որոնց գէշ վարմոնք ցուցուած է , կատաղի եւ վտանգաւոր կ'ըլլան : Կան մարդիկ ու տղաք որոնք անգթութեամբ կը վարվին անոնց հետ , բայց երբ անոնց քաղցր վարմոնք ցուցուած է , կարծեմ միշտ քաղցր եղած են անոնք : Ամէնէն մեծ եւ ամէնէն լաւ մարդոցմէ ոմանք որ երբեք ապրած են , շուն շատ սիրած են , Սըր Ուոլթըր Սքոթի եւ Սըր Էտուփին Լէնտսիրի նման մարդիկ : Եւ աղքատ մարդիկ յաճախ զանոնք իրենց լաւագոյն բարեկամները գտած են : Աղքատ , հիւանդ սեւամորթ մարդ մը ոտքով ճամբորդեց հարիւրաւոր մղօններ դէպ ի Լուիզվիլի հիւանդանոցը , Քէնթըքի , հասկնալու համար թէ արդեօք իրեն կարելի էր բուժուիլ : Իր շունը իրեն հետ էր : Բայց երբ ըսուեցաւ իրեն թէ պէտք է որ շունը փողոցը թողու , վասն զի հիւանդանոցին մէջ շուն ընդունիլ կարելի չէ , իսեղճ մարդը բազուկներուն մէջ առաւ շունը , եւ արտասուաթոր երեսով ըսաւ թէ աւելի կ'ընտրէ մեռնիլ իր շան հետ քան փողոցը ձգել զայն եւ հիւանդանոց երթալ : Ուրախութեամբ կ'ըսեմ թէ երբ հիւանդանոցի մարդիկը տեսան թէ մարդը ո՞չչափ կը սիրէ շունը , թոյլ տուփին որ շունը անոր հետ հիւանդանոց մտնէ :

Շատ անգթութիւն է շուները տան մէջ պահել բոլոր ժամանակը : Անոնք կ'ուզեն վազվռտել խաղալ ճիշդ տղոց պէս , եւ եթէ բոլոր ժամանակը տան մէջ փակուփին ,

կը հիւանդանան։ Անոնք պէտք է որ հանգստաւէտ տեղ ունենան ցուրտ գիշերները եւ առատ աղէկ ջուր, նաեւ պէտք չէ շատ յաճախ կերակրել զանոնք, եթէ ոչ՝ կը գիրնան եւ վատառողջ կ'ըլլան։ Եւ պէտք է որ միշտ շատ հոգ տանինք քաղցրութեամբ խօսիլ շուներուն, եթէ ոչ՝ երբ չարութիւն ընեն, վասն զի շունէն զատ չկայ կենդանի մը որ վշտանայ քաղցրութեամբ չխօսուելէ կամ անկէ աւելի երջանիկ ըլլայ երբ քաղցրութեամբ խօսուի իրեն։ Եւ կարծեմ մենք ինքնին միշտ աւելի երջանկութիւն կը զգանք քաղցրութեան գործեր ընելով այս բարեկամ արարածներուն։

Ուրախ պիտի ըլլայի եթէ աւելի շատ բաներ խօսէի ձեզի շուներուն վրայ, բայց այն ատեն այս Դասը չափազանց կ'երկարէր։

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ կրնաս ըսել այն շան վրայով որ չուզեց մէկդի երթալ իր տէրոջ գերեզմանէն։

Ո՞վ մահարձան մը կանդնել տուաւ այս շան համար, և ո՞ւր։

Հիւսիսային երկիրներու մէջ շուները ի՞նչ բանի կը գործածուին, և ինչո՞ւ։

Ուրիշ երկիրներու մէջ ի՞նչ բանի կը գործածուին անոնք։

Յիշէ այն կերպերէն մէկ քանին որոնցմով անոնք մարդկային կեանքեր աղատած են։

ի՞նչ կրնաս ըսել այն շան վրայ որ կոչուեցաւ «Անդամ Արքունի Բարեսիրական Ընկերութեան»:

Ի՞նչ կրնաս ըսել այն երեք մանուկներուն վրայ զորոնք ազատեց շուն մը Կլոուսէսթըր, Մասաչուսէց:

Ի՞նչ կրնաս պատմել այն ընտանիքին վրայով որ գրեթէ պիտի այրէր գիշեր ատեն, և միւս ընտանիքին վրայով որ գրեթէ պիտի մեռնէր ածխային կաղէ:

Քիւզիէ ի՞նչ կը խորհէր շուներուն վրայ:

Տուր անունները քանի մը մեծ մարդերու որոնք կը սիրէին շուները:

Ի՞նչ կրնաս պատմել այն աղքատիկ սեւամորթ մարդուն վրայով որ Լուիզվիլի հիւանդանոցը գնաց, ի Քէնթըրքի:

Ի՞նչու շուները պէտք չէ տան մէջ փակել բոլոր ժամանակը:

Ի՞նչու քաղցրութեամբ խօսելու ենք շուներուն:

Է. ՊԱՍ

Թ. ՌՉՈՒՆՆԵՐԸ

[Նախակրթարանի ուսուցիչներ կարդան աշակերտներուն]

Ըսուած է թէ «Եթէ մէկ թոչուն իսկ չգտնուէր ընդարձակ Սկովտիոյ մէջ, տակաւին անոր բլուրները եւ հովիտները պիտի արձագանգ տային անոր օրիորդներուն երաժշտութեան որոնք Ռոպըրթ Պըրնզի քաղցր մեղեղիները կ'երգեն:»

Բայց ճշմարիտ չէ այդ ըսուածը: Վասն զի եթէ թոչուն չգտնուէր ընդարձակ Սկովտիոյ մէջ, միջատնե-

ըլ, զորոնք կ'ուտեն թոչունները, պիտի ուտէին բոյսերը, երկիրը անապատ պիտի ըլլար, եւ ուստի ոչ մէկ օրիորդ պիտի կարենար ապրիլ ընդարձակ Սկովտիոյ մէջ:

Ուսեալ Գաղղիացի մը, Միշլէ անուն, որ շատ ուսումնասիրած է թոչունները, կ'ըսէ թէ, «Ե՛ւ ջնջուեն բուլը նուշտանեւը, մարտեն չեն հրար առուեւերեւ չըայ,» վասրն զի միջատները, որոնցմով կը կերակրուին թոչունները, յոյժ պիտի շատնային: Մեր մանր թոչուններէն մէկքանին մէկ շաբաթուան մէջ հազարաւոր թրթուրներ եւ ուրիշ միջատներ կ'ուտեն: Միակ փոքրիկ թոչուն մը, զոր անխորհուրդ տղայ մը կրնայ զարնել, եթէ թոյլատրուէր ապրիլ, թերեւս հարիւր հազարէ աւելի միջատներ պիտի կորսնցնէր, եւ փոքրիկ թոչունի մը բոյնէն առնուած իւրաքանչիւր հաւկիթ այս միջատները կորսնցնող թոչուններէն հատ մը կը պակսեցնէ:

Ցաւով կ'ըսեմ թէ Ամերիկայի մէջ փոքրիկ թըռչունները կը քիչնան հետզհետէ, եւ վնասակար միջատներ հետզհետէ աւելի կը շատնան: Նոր երկիրներու մէջ, ուր մարդիկ եւ տղաք վախցուցած չեն թոչունները, անոնք թոյլ կու տան մեզի իրենց շատ մօտ երթալ եւ տեսնել թէ իրենք ինչպէս կը շինեն իրենց ճարտարարուեստ բոյները, ինչպէս կը կերակրեն իրենց ձագերը, եւ ինչպէս կը սորվեցնեն անոնց թոչիլ: Մր. Ռըսքին, համբաւաւոր Անգղիացի մը, որ յոյժ սիրելի է իր հայրենակիցներուն, կ'ըսէ թէ իր սրտագին փափաքն այն է որ Անգղիացի տղաք ու աղջիկներ քաղցր ըլլան թոչուններուն: Եւ այնպէս կը թուի թէ կը փափաքի որ անոնք անդամ՝ գրուին « Թոչուններու Ընկերութեան, » որուն

վրայով խօսեցայ իմ առաջին Դասիս մէջ, եւ որ հիմա ունի աւելի քան 37,000 անդամներ, տղայ եւ աղջիկ, եւ ասոնց իւրաքանչիւրը խոստացած է ջանալ ուրիշ տըղաք ու աղջիկներ քաշել որոնք անդամ ըլլան անոր :

Կը յիշէք Թհորօն, որոն վրայով ալ խօսեցայ իմ առաջին Դասիս մէջ, թէ ինչպէս ան քաղցր էր թըռչուններուն, թէ ինչպէս թոչունները կը թոչէին կու գային անոր ուսերուն վրայ եւ մինչեւ իսկ անոր բրիչին վրայ մինչ կը փորէր գետինը : Ես քանի մը տարի առաջ ֆարիզ, հանրային մեծ պարտէզներէն մէկուն մէջ, տեսայ մարդ մը, որ այնքան քաղցր էր հոն գտնուած վայրի թոչուններուն, որ անոնք կը թառէին անոր ձեռքերուն վրայ եւ կը կերակրուէին անոր մատերէն : Իտալիոյ Վենետիկ քաղաքին մէջ ժողովուրդը ամէն օր կէսօրին կեր կու տայ Սր. Մարկոսի հանրային մեծ հրապարակին մէջ, եւ երբ կը մօտենայ կէսօրուան ժամը, կը տեսնես որ աղանձնները կը թոչին քաղաքին ամէն կողմերէն, կու գան շէնքերուն տանիքներուն վրայ, կերակրուելու համար : Վենետիկի մէջ ոճիր է աղաւնի մը վնասելը :

Ոմանք կը զարմանան թէ ձմեռը ուր կ'երթան թըռչունները : Ատոնք կը մոռնան թէ թոչունները թեւեր ունին, եւ անոնց մէջ կան այնպիսիներ որ աւելի հեռու կը թոչին դէպի տաք կլիմաներ մէկ օրուան մէջ քան զոր մենք կարող ենք երթալ ձիերով ու կառքերով մէկ շաբաթուան մէջ : Կ'ըսուի թէ ծիծառը կրնայ ժամը վաթսուն մղոն թոչիլ, եւ թէ «Ֆէէէ,՛՛ կոչուած թոչունը կրնայ արեւադարձին Ատլանտեան Ովկիանոսին մէկ եզրէն միւսը թոչիլ մէկ գիշերուան մէջ միայն : Այս թոչուններէն ոմանք յոյժ

գեղեցիկ փետուրներ ունին, զորոնք պիտի կրնայինք վայելել միշտ եթէ Թհորոյի նման քաղցրութեամբ վարուէինք անոնց հետ, որպէս զի անոնք մեզի մօտ գային: Եւ անոնցմէ ոմանք այնպէս գեղեցիկ կ'երգեն, որ բարի մարդ մը ստիպուեցաւ ըսել, «Տէր, ինչ երաժշտութիւն պատրաստած ես ուրեմն երկինքին մէջ քու սուրբերուդ, երբ այսպիսի քաղցր երաժշտութիւն կը շնորհես մարդոց երկրիս վրայ: »

Քանի մը տարի առաջ Անգղիացի մը Նեղոս գետին վար կ'իջնէր ցորենով լեցուն խոշոր նաւակով մը, եւ թոչունները ամէն գիւղերէն կու գային եւ կ'ուտէին նաւին տախտակամածին վրայ դիզուած ցորենէն: Անգղիացին հարցուց Եգիպտացի նաւապետին, «Այս ցորենին տէրը հի է: » «Ես եմ, » ըսաւ Եգիպտացի նաւապետը: Այն ատեն Անգղիացին հարցուց անոր թէ ինչո՞ւ թոչուններուն կը թողու ցորենը ուտել: Այն ատեն Եգիպտացին հարցուց Անգղիացիին, «Ո՞վ ստեղծեց թոչունները.» Եւ Անգղիացին պատասխանեց, «Աստուած: » Այն ատեն Եգիպտացին հարցուց թէ ցորենը ուտե՞ստ մըն է զոր կ'ուզէ Աստուած որ ուտեն թոչունները: Եւ Անգղիացին պատասխանեց, «Այո: » Այն ատեն Եգիպտացին ըսաւ, «Թող ուտեն ու կշտանան, վասն զի Աստուած իր բարութեամբ բաւական բան պատրաստած է իր բոլոր արարածներուն համար: »

Մեծ չարութիւն եւ անգթութիւն է սպաննել կամ վիրաւորել այս փոքրիկ թոչունները որոնք այսքան օգտակար են, եւ կ'երգեն այնքան անոյշ եւ այնքան կը վայելեն կեանքը: Եւ աւելի չարութիւն եւ անգթութիւն է

սպաննել կամ վիրաւորել զանոնք գարնան եղանակին մանաւանդ, երբ անոնց փոքրիկ բոյները լեցուն են ձագերով որոնք կրնան անօթութենէ մեռնիլ եթէ մսասուի մայր թոշունը: Եւ նոյնքան անգթութիւն է բոնել զանոնք եւ փակել պղտիկ վանդակներու մէջ, հեռու էրեւա բարեկամներէն եւ ընկերներէն, ինչպէս պիտի ըլլար եթէ հսկայ մը բոնէր պղտիկ տղաք եւ աղջիկներ եւ փակէր զանոնք պղտիկ վանդակներու մէջ, հեռու առանց բոլոր բարեկամներէն եւ ընկերներէն: Բայց այս ճշմարիտ չէ դեղձանիկի (գանարեա գուշու) նման թոշուններու համար, որոնք երբեք ազատ եղած չեն: Եթէ անոնք ունին զիրենք լաւ ինսամողներ, եւ լաւ վանդակներ, եւ առատ ուտելիք ու խմելիք, եւ հոգածութեամբ կը պաշտպանուին օդէն, եւ թերեւս թոյլ տրուի անոնց թոշտիլ տան մէջ ամէն օր ժամ մը երկուք, կրնան շատ երջանիկ ըլլալ: Ես սովորաբար թոյլ կու տամ իմ դեղձանիկիս՝ օրը քանի մը ժամ թոշիլ տանս մէջ, եւ անիկա թոշելով կու գայ մատերուս վրայ երբ կը կանչեմ զանիկա, թէեւ աւելի կ'ընտրէ գըլխուս գագաթին վրայ գալ եւ հոն խաղալ ինծի հետ: Երբ չուզեմ որ երգէ, անոր վանդակին մէջ կը դնեմ պղտիկ հայելի մը, հոգ տանելով որ՝ երբեք արեւը կամ լամբարը չցոլանայ անոր մէջ, այնպէս որ չխտղտին անոր աչքերը, եւ դեղձանիկը իր վրայ կը նայի ժամերով եւ մուկի մը պէս հանդարտ եւ անձայն կը կենայ:

Եթէ կը կարծէք թէ թոշունները չեն հասկնար երբ իրենց քաղցրութեամբ խօսիք, կը սխալիք: Երկու երեք տարի առաջ բարի կին մը զոր կը ճանչնամ, Պոսթընի մօտ, դեղձանիկ մը ունէր զոր շատ կը սիրէր եւ երբեք

խստութեամբ չէր խօսեր անոր : Բայց օր մը տիկինը շատ
ուշ տուն եկաւ ճաշի , եւ անոր այրը — պատուական
մարդ , որ անոր սպասած էր երկար ատեն — շատ խիստ
խօսեցաւ կնոջը , ինչպէս երբեմն կ'ընեն բարի մարդիկ :
Ճիշդ այդ ատեն թոչունը սկսաւ կանչել իր տիկնոջ ,
եւ անոր այրը ամչցուց որ այնպէս խստութեամբ խօսած
էր իր կնոջ : Կինը նոյն կերպով խօսեցաւ : Քանի մը
վայրկեան յետոյ տիկինը թրթոռում մը լսեց վանդակին
մէջ , եւ երբ անոր քով գնաց , ահա թոչունը մեռած էր :
Թոչունները շատ աւելի գիտեն քան զոր ոմանք մարդիկ
կը կարծեն թէ գիտեն անոնք : Անոնք գիտէին երբ թհորո
քաղցրութեամբ կը խօսէր իրենց , եւ գիտեն երբ ուրիշներ
խստութեամբ կը խօսին :

Կարծեմ ոչ ոք երբեք կը կերակրէ թոչունները կամ
անոնց համար կ'ընէ ոեւէ բարեսիրական բան , առանց
աւելի երջանկութիւն զգալու եւ աւելի բարի ըլլալու այդ
պատճառաւ : Եթէ ըսածներուս չէք հաւատար , փորձեցէք:

Վալթէր Ֆոն Ֆոկըլվայտ Միջին Դարերու մեծ քնա-
րերգակ բանաստեղծը , այնքան կը սիրէր թոչունները ,
որ Վուրցպուրկի ճգնաւորներուն կալուած մը կտակեց ,
պայմանաւ որ անոնք ամէն օր կերակրէին իր գերեզմա-
նաքարին վրայի թոչունները :

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ ըսուած է Ակովտիոյ համար , և ինչո՞ւ ճշմարիտ
չէ այս :

Միշլէ ի՞նչ ըսած է թուչուններուն համար :
Ի՞նչ կ'ուտեն մեր փոքրիկ թուչուններէն ոմանք :
Ի՞նչ կ'ըսուի Ամերիկայի թուչուններուն և միջատաներուն վրայ :

Ի՞նչ կ'ըսուի նոր երկիրներու թուչուններուն վրայ ,
Ի՞նչ ըսած է Մր . Ռըսքին թուչուններուն վրայ :

Անգղիոյ «Թուչուններու Ընկերութիւնը» քանի անդամներ ունի հիմա :

Ի՞նչ կրնաս ըսել Թհորոյի վրայ :

Ի՞նչ՝ Փարիզի թուչուններուն վրայ :

Ի՞նչ՝ Վենետիկի աղաւնիներուն վրայ :

Զմեռը ո՞ւր կ'երթան թուչուններուն մեծ մասը :

Անսնք ո՞րչափ արագ կրնան թոչիլ :

Ի՞նչ ըսուած է թուչուններուն գեղեցիկ երգերուն վրայ :

Ի՞նչ կրնաս ըսել Նեղոսէ իջնող Անգղիացիին վրայ :

Ինչո՞ւ աւելի մեծ չարութիւն է թուչունները սպանանել գարնան եղանակին :

Ի՞նչ կ'ըսուի վայրի թուչուններ բոնելու և վանդակներու մէջ փակելու վրայ :

Ի՞նչ կ'ըսուի ընտանի դեղձանիկներու վրայ :

Ի՞նչ կրնաս պատմել Պոսթընի մօտ գտնուած այն դեղձանիկին վրայով :

Թուչունները կը հասկնա՞ն երբ քաղցրութեամբ խօսիք :

Ի՞նչ կ'ըսուի Վալթէր Ֆոն Ֆոկըլվայտի վրայ :

Է. ԴԱՍ

ԿԱՏՈՒԻՆ

[Նախակրթարանի ուսուցիչները կարդան աշակերտներուն]

Կատուներուն երախտագէտ ըլլալու շատ պատճառներ ունինք : Անոնք առնէտներ եւ մուկեր կը բռնեն : Ամէսօրեայ զբոսանքն են հարիւր հազարաւոր մանուկներու, եւ իրենց ներկայութեամբ հարիւր հազարաւոր տուներ աւելի կ'երջանկացնեն :

Եւրոպական երկիրներու մէջ երեւելի շատ մարդիկ շատ սիրած են զանոնք : Անգղիացի համբաւաւոր Տր. ձոնսըն կարծես մարդկային բարեկամի վրայ նայելու պէս կը նայէր իր կատուին վրայ : Անգղիացի նշանաւոր կարդինալ Վոլսէյ սովոր էր երկրին ազնուականները ընդունիլ իր սիրական կատուն նստած ունենալով իր փառաւոր աթոռին բազուկին վրայ կամ իր գահին ետեւը : Գաղղիացի մեծ դիւանագէտը Ռիշլիէօ անգամ մը չքմեղացուց ինքզինք ոտքի չելլելուն համար օտար դեսպան մը ընդունելու ատեն, վասն զի իր սիրական կատուն եւ անոր ձագերը իր զգեստներուն վրայ պառկած էին : Փէթրարքա, Խտալիոյ մեծ բանաստեղծը, իր սիրական կատուն զմուսել տուաւ երը մեռաւ անիկա :

Արեւելեան երկիրներու մէջ կատուները մինչեւ իսկ աւելի բարձր յարգ կը վայելեն քան Եւրոպայի կամ Ամերիկայի մէջ : Եգիպտոսի մէջ, ուր կը կարծուի թէ, առաջին անգամ գործածուեցան ընտանի կատուներ, անոնք

սրբազն կը համարուէին, եւ երբ մեռնէին, կը զմոսուէին եւ խորշերու մէջ կը դրուէին գետնադամբաններու մէջ:

Ահա կատուններուն մասնաւոր յատկութիւններէն մէկքանին. Անոնք շատ աղէկ կը տեսնեն գիշերը: Կրնան ծառ ելլել իրենց սուր ճանկերը մխելով կեղեւին մէջ: Կրնան մեծ հեռաւորութիւններէ վար ցատկել առանց իրենքզիրենք վնասելու, եւ կը քալեն առանց ձայն հանելու, վասն զի փոքր բարձիկներ ունին իրենց մատերուն ներքեւ: Ունին երկայն ընչացքներ (պըյըգ) կամ մազեր իրենց ճակատներուն եւ թուշերուն վրայ, որոնց շնորհիւ կը գիտնան թէ ծակերը բաւական խոշոր են անոնց մէջէն իրենց մարմիններուն անցնելուն համար: Շատ սուր ակուաներ ունին, շատ ուժեղ ծնօտներ եւ շատ խորտուբորտ լեզու: Շատ կը սիրեն միս եւ ձուկ: Զեն սիրեր թրջիլ, եւ երբ շատ հեռու եւ նոր տեղեր տարուին, կարողութիւն ունին նորէն ետ իրենց առաջուան բնակավայրը դառնալու շատ արագութեամբ, եթէ ուզեն: Կը յիշեմ թէ կատու մը առագաստանաւով Մասաչուսէցի ծովեզերեայ քաղաքէ մը տասներկու մղոն հեռու ուրիշ քաղաք մը տարուեցաւ երկու օրուան մէջ, որչափ կը յիշեմ, եւ ցամաքին վրայէն իր նախկին բնակավայրը վերադարձաւ:

Թէ անոնք կը տրամաբանեն բաներու վրայ, յաճախ հաստատած եմ, կատուս ճաշարանէն խոհանոց ղրկելով, բաց թողելով ճակատի սրահին մէջ բացուող դուրսի դուռը: Անիկա վեր կ'ելլէր ետեւի սանդուղէն, վար կ'իջնէր ճակատի սանդուղէն եւ իբր երկու վայրկեանէն ետ կը դառնար ճակատի դուռնէն եւ կը մտնէր ճաշարան:

Կ'ըսուի թէ Տանթէ, հտալացի մեծ բանաստեղծը, կրթած էր իր կատուն թաթերովը մոմ բռնել երբ կարդար: Բայց գիշեր մը բանաստեղծին մէկ բարեկամը տուփէ մը մուկ մը հանեց եւ անոր գրասեղանին վրայ դրաւ, եւ ահա կատուն իսկոյն ձգեց մոմը եւ վազեց մուկին ետեւէն:

Բայց թէեւ կատուները պիտանի են այս այլեւայլ կերպերով, թող տալու չէ երբեք որ չափազանց շատնան, վասն զի միտում ունին ուտելու մանր թոչուններ, որոնք նոյնքան պիտանի են, եւ երբեմն կատուներէն ալ աւելի պիտանի են, եւ եթէ աղէկ չը կերակրուին, կը բռնեն հաւու ձագերը: Կարծեմ թէ իւրաքանչիւր ոք որ կատու կը պահէ, նայելու է որ անիկա ունենայ յարմար ուտելիք եւ ջուր, եւ զանիկա գիշերը պահելու է տան կամ ախոռին մէջ, որպէս զի չսպաննէ այս պիտանի փոքրիկ թոչունները կամ հաւու ձագերը:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչո՞ւ երախտագէտ ըլլալու ենք կատուներուն:
Ի՞նչ կ'ըսուի համբաւաւոր Տր. Ճոնսընի վրայ:
Ի՞նչ կ'ըսուի Կարդինալ Վոլսէյի վրայ:
Ի՞նչ կ'ըսուի Դավդիխացի դիւանագէտ Ռիշլիէօյի վրայ:
Ի՞նչ կ'ըսուի Խտալիոյ մեծ բանաստեղծ Փէթրարքակի վրայ:

Կատուներուն ի՞նչ յարգ կ'ընծայուի Արեւելեան երակիրներու մէջ:

Կատուները ի՞նչպէս կը նկատուէին և ի՞նչ վարումունք կը տեսնէին Եղիպտոսի մէջ:

Ի՞նչ են կատուներուն մասնաւոր յատկութիւններէն
մէկ քանին :

Ի՞նչ կ'ըսուի անոնց երկար հեռաւորութենէ իրենց
ճամբան գտնելուն նկատմամբ :

Ի՞նչ կ'ըսուի կատուներուն տրամաբանելուն նկատ-
մամբ :

Ի՞նչ կ'ըսուի Տանթէի կատուին վրայ :

Ի՞նչ կ'ըսուի անոնց ուտելուն նկատմամբ փոքրիկ
թռչունները և հաւու ձագերը :

Կատուի տէրերը ի՞նչպէս պահելու են դանոնք :

Թ. ՊԱՍ

ՔԱՂՅՐ ԵՂԵՔ

[Հոս կը դնենք այս նիւթին վրայ զրուած Անգղիերէն ընտիր
ոտանաւորի մը արծակ թարգմանութիւնը]

Քաղցր եղէք, սիրելի զաւակներ : Աշխարհ կ'օրհնէ
սիրտը որ կը բերկրի տառապանք վերցնելով, ձեռքը՝ որ
պատրաստ է օգնութիւն ընել վախցած մանուկի մը կամ
կենդանիի մը : Քաղցր եղէք :

Քաղցր եղէք, սիրելի զաւակներ : Կը զօրանայ սիր-
տը որ կը փախչի մասնակցելէ ոեւէ ծուռ գործի : Ամե-
նազնիւ մարդիկ, զորոնք երբեք ճանչցած է երկիր, մի-
այն իրենց համար չապրեցան : Քաղցր եղէք :

Քաղցր եղէք, սիրելի զաւակներ, եւ պիտի տեսնէք
աչքեր որոնք ձեր աչքերուն մէջ կը նային երախտագի-
տութեամբ: Թէեւ շրթունք չեն խօսիր, սակայն կան խօս-

քեր, եւ անաստոնի մը սիրտը պիտի չմոռնայ: Քաղցր եղէք:

Քաղցր եղէք, սիրելի զաւակներ, վասն զի Աստուած ըսած է իր Սուրբ Գիրքին մէջ, զոր կը կարդաք, թէ ողորմածները ողորմութիւն պիտի գտնեն, եթէ դուք անոր սիրելու շնորհքը ստանաք: Քաղցր եղէք:

Պ Զ Տ Ի Կ Ք Ա Ր Ո Զ Մ Ը

Բնաբնան. Կենդանիները պաշտպանելու պարտականութիւնը:

Կան պատճառներ թէ ինչու պարտիք ընել ինչ որ կրնաք, կենդանիները պաշտպանելու համար.

1. Անոնք, մարդկօրէն խօսելով, են անխօս եւ անպաշտպան:

2. Անոնք մասնաւոր կերպով ենթակայ են անգութ վարմունք տեսնելու:

3. Անոնք զոհերն են գիտութեան, որսորդութեան, նորոյթի (մօտա), տգիտութեան եւ նախապաշարմունքի:

4. Աշխարհիս մէջ արդէն այնքան տառապանք եւ չարչարանք կան, որ պարտիմք մեր կարողութեան ներքեւ ինկող ամէն բան ընել զանոնքնուազեցնելու եւ ոչ թէ աւելցընելու համար:

5. Վատ եւ անարգ գործ է ապրող, զգայուն արարած մը անհարկի եւ խորշելի չարչարանքի ենթարկել:

6. Կենդանիները այնքան աղէկ բաներ կ'ընեն մեզի համար եւ այնքան շատ կերպերով, ծառայելով մեր պէտքերուն, որ իրաւունք կը ստանան որ իրենց զանազան

ցեղերը ազատ կացուցուին անգթութենէ, չարչարանքէ եւ չարաչար վարմունքէ:

7. Անոնց իրաւունքներուն հանդէպ անձնասիրական եւ անփոյթ արհամարհանքը աղետալի հակագործութիւն մը միայն կրնայ յառաջ բերել մարդկային ընտանիքին բարոյական բնութեան վրայ, եւ նմանօրինակ ուրիշ չարիքներ արդարանալի կը ցուցնեն: Կարճ քայլ մը կայ կենդանիներու անգթութեան եւ մարդկային էակներու անգթութեան մէջտեղ: Ծնողքներ, որոնք իրենց զաւակները կը կրթեն քաղցր, խղճամիտ եւ խոհոն ըլլալ կենդանիներու հանդէպ, գանձեր կը դիզեն, զորոնք իրենք իսկ պիտի քաղեն երբ այդ զաւակները մեծնան:

8. Ինչպէս ձէրէմի Պէսթըմ մեծ իրաւագէտը գրեց կենդանիներուն պահանջներուն վրայ. «Խնդիրը այն չէ, թէ Անոնք կրնան տրամաբանել, ոչ ալ, Կրնան խօսիլ, այլ Կրնա՞ն առաջբարել:»

ՈՉ ԽԱՐԸ, ԳԱՌԸ, ԳՈՐԸ

[Նախակրթարանի ուսուցիչները կարդան աշակերտներուն]

Մեր տաքուկ բրդեղէն զգեստներուն, մեր վերմակներուն, ցփսիներուն (շալ), գուլպաներուն, կիսաձեռնոցներուն, կապերտներուն եւ ամէն բաներուն համար որոնք բուրդէ կը շինուին, պարտական ենք ոչխարներուն եւ գառներուն, այն անուշիկ եւ անվնաս արարածներուն:

Գառը դարերէ հետէ անմեղութեան տիպար ճանչցուած է: Արեւելեան երկիրներու մէջ ոչխարները յոյժ քաղցրութեամբ կը խնամուին եւ փափուկ վարմունք կը

տեսնեն : Արեւելեան հովիւը չի վարեր իր ոչխարները , այլ կ'առաջնորդէ , եւ տկարագոյնները իր բազուկներուն մէջ կը կրէ : Երբ Սաղմոսերգուն կը խօսի Աստուծոյ քաղցրութեան վրայ , կ'ըսէ . «Տէրը իմ հովիւս է , ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ : Զիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ . հանդարտ ջուրերուն քով ինծի կ'առաջնորդէ :»

Կը վախնամ թէ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ այսպէս քաղցր վարմունք չի ցուցուիր անոնց հանդէպ : Կը գտնուին այնպիսի անգութ մարդիկ որ ձմեռը եւ ցուրտ եղանակի ատեն այս խեղճ կենդանիներուն տաքուկ բուրդը կը կտրեն , յետոյ զանոնք շուկայ կը ղրկեն , ուր խեղճերը երբեմն կը սարսուան եւ կը սառին քանի մը օր մինչեւ որ մորթուին : Եւ մեր սպանդանոցներուն մէջ կը գտնուին այնպիսի անգութ մարդիկ , որ զանոնք կը մորթեն իրարու ներկայութեան , եւ ոչ թէ զատ զատ ինչպէս պէտք էր որ ընէին :

Եւ հիմա քանի մը խօսք պիտի խօսիմ այն յոյժ օգտակար եւ բարի , թէեւ ոչ շատ գեղեցիկ , արարածին , դոդոշին (խոշոր գորտ) , վրայ :

Բոլոր մանուկներ գիտնալու են թէ դոդոշները ոչ միայն բոլորովին անվասաս են , այլ մեր ամենալաւ բարեկամներէն են : Անոնք կ'ուտեն եւ կը կորսնցնեն հազարաւոր մրջիւններ , սարդեր եւ շատ մը ուրիշ միջատներ որոնք կը վնասեն մեր պարտէզներուն : Գաղղիոյ մէջ անոնք այնպէս օգտակար կը նկատուին պարտէզներու համար , որ կը ծախուին հարիւրը տամսըհինգէ մինչեւ տասնըեօթը տոլարի , այսինքն մէկ հատը 4-5 դահեկանի :

Ուէլինկթընի մեծ դուքսը, շատ տարիներ առաջ գտաւ պղտիկ տղայ մը որ կուլար, վասն զի տունին պիտի բաժնուէր եւ դպրոց պիտի երթար ուրիշ քաղաք մը, եւ պիտի չունենար մէկը որ կերակրէր դոդոշը զոր սովորութիւն ըրած էր կերակրել ամէն առաւօտ : Ազնիւ եւ ուսեալ դուքսը, դեռահասակ բարեկամին համակրելով, խոստացաւ հոգ տանիլ որ դոդոշը կերակրուի ամէն առաւօտ : Յետոյ մարածախտէն, Ուէլինկթընի դուքսէն, նամակ նամակի ետեւէ եկաւ փոքրիկ տղուն թէ դոդոշը ողջ առողջ է :

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ պատճառներ կան քաղցր ըլլալու ամէնուն :
Ի՞նչ պատճառներ կան կենդանիները պաշտպանելու :
Ի՞նչ կ'ըսուի դոդոշներուն և Գաղղիոյ մէջ անոնց արժէքին վրայ :

Ի՞նչ կրնաս պատմել Ուէլինկթընի մեծ դուքսին դուդուի մը ցուցուցած հոգածութեան համար :

Ժ. ՊԱՍ

ՄԱՆՐԱՎԵՐ

Անգղիա, մեծ հանրային դպրոցի մը մէկ ուսուցիչը շատ տարիներ իր դպրոցի աշակերտներուն ինսամով սորվեցուցած է կենդանիներու քաղցրութիւն ցուցնել, կե-

րակրել թոչումները, սիրել, շոյել ձիերը, եւ Աստուծոյ անվասա արարածները երջանկացնելու հաճոյքը վայելել, եւ հիմա կը պատմէ թէ իր դպրոցէն ելած իբր 7,000 տղոցմէն ոչ մէկը երբեք եղեռնական յանցանքի մը համար ամբաստանուած է ոեւէ դատարանի առջեւ:

Գաղղիացի հոչակաւոր ուսուցիչ մը, Մ. Տը Սայյի, 1851էն ի վեր իր դպրոցին աշակերտներուն կը սորվեցրնէ քաղցրութիւն կենդանիներուն հանդէպ : Կ'ըսէ թէ ասիկա լաւագոյն ազդեցութիւն ըրած է անոնց կեանքերուն եւ նկարագիրներուն վրայ : Գտած է թէ անոնք « ոչ միայն աւելի քաղցը եղան կենդանիներուն հանդէպ, այլ՝ աւելի փափկանկատ՝ հանդէպ իրարու, » եւ կը յուսայ թէ կենդանիներու հանդէպ քաղցրութեան սկզբունքներ ընդհուպ պիտի ուսուցուին ամէն դպրոցի մէջ : Գաղղիական աւելի քան հինգ հազար դպրոցներու մէջ հիմա այս նիւթին վրայ կանոնաւոր դասեր կ'աւանդուին մանուկներու, եւ ինչպէս առաջ ըսած եմ, մանուկներու հարիւրաւոր, թերեւս հազարաւոր ընկերութիւններ կազմուած են Անգղիոյ, Գաղղիոյ եւ ուրիշ երկիրներու դպրոցներուն մէջ, կենդանիները անգթութեան դէմ պաշտպանելու համար: Ամերիկեան բանտերու իբր 2,000 բանտարկեալներուն մէջ, քննութեամբ հասկցուած է որ, միայն 12 հոգի սիրական կենդանի ունեցած են իրենց մանկութեան միջոցին:

Այժմ Անգղիական դպրոցներու մէջ ամէն տարի իբր 600 մրցանակներ կը տրուին անոնց որ լաւագոյն շարադրութիւններ կը գրեն կենդանիներու հանդէպ քաղցրութեան վրայ : Այդ մրցանակները այս աշակերտներուն նուիրուած են Թագուհոյն դուստրներուն եւ ուրիշ նշա-

նաւոր անձերու ձեռամբ ի ներկայութեան բազմաթիւ ունկնդիրներու, որոնց թիւը անգամ մը հասաւ գրեթէ 10,000ի: Ես ուրախութեամբ կարդացի անցեալ օր թէ Անգղիացի քաջ երկու տղաք արգելեցին երեք չար տղոց անգթութիւնը հանդէպ կատուի մը զոր գողցած եւ անոր պարանոցը չուան մը կապելով՝ զուարճութեան համար զանիկա ջուրի լայն խրամ մը ձգելու վրայ էին, որպէսզի խեղդուէր կենդանին, եւ յետոյ դուրս քաշէին զանիկա: Այս երկու քաջ տղաքը միւսներէն պզտիկ էին, եւ խոստացան անոնց տալ իրենց բոլոր ստակը — իբր մէկ շիլին — եթէ կատուն թող տային, բայց սրիկաները միայն խնդացին անոնց վրայ եւ մտիկ չըրին: Հասկնալով թէ կատուն ազատելու ուրիշ ճամբայ չկայ, երկուքը մէկէն խոյացան մեծ սրիկային վրայ եւ զանիկա նետեցին խրամին մէջ ուր ան պիտի նետէր կատուն: Այնուհետեւ այնպէս ուժգնութեամբ վազեցին միւսին վրայ որ կատուն բռնած էր, որ ան ձեռքէն վար ձգեց կատուն: Այնուհետեւ վազեցին երրորդին վրայ, եւ ան փախաւ: Այն ատեն առին կատուն եւ վազեցին գացին տակաւին սրիկաները իրենց հետեւելու ժամանակ չունեցած: Ասիկա ոիւցազնական ճակատամարտ մըն էր խոշոր տղոց հետ մղուած, կենդանիներու դէմ անգթութիւնը արգելելու համար, կը կարծեմ թէ այդ տղաքը որ ըրին այդ դիւցազնութիւնը, այնքան արժանի են «Պատույ Լէգէոն»ի ասպետներ ըլլալու որքան մարդ մը որ երբեք կը կուրի պատերազմի դաշտի վրայ:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ կ'ըսուի Անդղիոյ ընդարձակ հանրային մէկ դպրոցին վրայ :

Ի՞նչ կ'ըսուի Գաղղիական դպրոցի մը վրայ :

Ի՞նչ կ'ըսուի կենդանիներու հանդէալ քաղցրութեան Դասերու վրայ Գաղղիական դպրոցներու մէջ :

Ի՞նչ կ'ըսուի Անդղիոյ, Գաղղիոյ և ուրիշ երկիրներու մէջ մանուկներու ընկերութիւններու վրայ :

Ի՞նչ կ'ըսուի Ամերիկեան բանտերու մէջ գտնուած ոճրագործներու վրայ :

Ի՞նչ՝ Անդղիական դպրոցներու մէջ տրուած մրցանակներու վրայ :

Ի՞նչ կրնաս ըսել երկու քաջ Անդղիացի տղոց վրայ :

ՃԱ. Գ Ա Ս

Խորհե զարնելք առաջ ունե արտրածի որ չե կրնար խօսել:

Կը յիշեմ թէ տղայութեանս կարդացած եմ վաճառականի մը վրայով որ ձիով կը ճամբորդէր, իր շունն ալ իրեն հետ : Պատճառով մը ձիէն իջաւ եւ դիպուածով ձգեց ստակի ծրարը : Շունը տեսաւ ատիկա : Վաճառականը չտեսաւ : Շունը հաջեց իր տէրը կեցնելու համար, եւ երբ աւելի յառաջացաւ մարդը, շունը ձիուն առջեւ նետուեցաւ եւ հաջեց եւ հետզետէ աւելի բարձաձայն հաջեց : Վաճառականը կարծելով թէ շունը կատղած է, ատըր-

ճանակ մը հանեց պատեանէն եւ զարկաւ զանիկա։ Վիրուորեալ շունը սողալով ետ դարձաւ ծրարին քով, եւ երբ վաճառականը հասկցաւ իր կորուատը եւ ետ դարձաւ, գտաւ իր մեռնելու վրայ եղող շունը որ հոն կը պառկէր հաւատարմաքար պահպանելու համար գանձը։

Հետագայ փոքրիկ պատմութիւնը զոր պատմած է իմ մէկ բարեկամս, այսպէս ցաւագին չէ, բայց ոյժ կու տայ սա խօսքին, Խուճէ պատճել առաջ ու ու արարածի ու ն իւստը եւստէւ.

«Երբ տղայ էի եւ կը բնակէի նիւ Հէմփշիրի լեռներուն մէջ, երկրագործի մը քով կ'աշխատէի, եւ ինծի ձիեր յանձնուեցան անոնցմով հերկելու համար։ Զիերէն մէկը չորս տարեկան քուռակ մըն էր։ Քուռակը քանի մը քայլ առնելէ ետքը կը պառկէր ակօսին (փորուած գետնին) վրայ։ Երկրագործը բարկացաւ, եւ ըսաւ ինծի որ նստիմ քուռակին գլխուն վրայ, զանիկա բարձր պահելու համար մինչ ինք խարազանէ զայն, «անոր այդ անոհուեաւ հուրեւսուար»։ Ինչպէս ըսաւ։ Բայց ճիշդ այդ ատեն դրացի մը եկաւ, ըսաւ, «Ծուռ բան մը կայ հոս. թող ելլէ կենդանին եւ քննութիւն մը ընենք։» Ծոյեց քուռակը, նայեցաւ անոր կազմածին վրայ, եւ յետոյ ըսաւ, «Նայեցէք այս մանեակին վրայ։ անիկա այնպէս երկայն է եւ նեղ, եւ կազմածը այնքան բարձր կը բռնէ, որ երբ քուռակը քաշել կը սկսի, անիկա ետ կը սահի եւ կ'արգելէ կենդանին շնչառութիւնը։ Եւ այնպէս էր բանը։ Եթէ այդ դրացին չըլլար, պիտի շարունակէինք խարազանել այնպիսի քաղցր արարած մը զոր ունեցանք արտին վրայ, վասն զի գետինը կը պառկէր երբ չէր կրնար շնչել։»

Դեռ անցեալ օր էր որ լսեցի պատուական Սբ. Բեռնարդոսի շան մը վրայ որ հրազենով զարնուած էր, վասն զի գլխուն վրայ վէրք մը ունենալով, որ ծածկուած էր մազերովը, խածաւ մարդ մը որ կոշտութեամբ դպաւ անոր :

Տղաք, պզտիկ ու մեծ, միտք բերէք թէ այս արարածները մունջ են, չեն կրնար խօսիլ : Գուցէ անօթի են կամ ծարաւ, կամ կը մսին, կամ տկար են, կամ հիւանդ, կամ ճմլուած է անոնց մէկ կողմը կամ վիրաւորուած են եւ չեն կրնար ըսել ձեզի :

Խորհե պարունակ առաջ ու եւ արարածի որ չեն կրնար խօսիլ :

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

Ի՞նչ կրնաս ըսել վաճառականին և անոր չանը վրայ :
Ի՞նչ կրնաս ըսել քուռակին վրայ որ գետինը կը պառկէր :

Ի՞նչ կրնաս ըսել Սբ. Բեռնարդոսի այն չանը վրայ :
Ի՞նչ կը խնդրուի քեզմէ որ միտք բերես :

ԺԲ. ՊԱՍ

Միտք բերուելու ուրիշ բաներ

Բացի այն բաներէն զորոնք կը պարունակեն նախընթաց տասնըմէկ Դասերը, քանի մը ուրիշ բաներ ալ կան,

զորոնք բոլոր տղաքն ու աղջիկները պարտին միտք բերել.

(1) Երբեք գնդասեղ մի խոթեր թիթեռնիկի եւ ուրիշ միջատներու մարմնին մէջ, եթէ չես ուզեր որ մէկը քեզի այդպէս ընէ:

(2) Հաւերն ու թոչունները երբեք գլխիվայր կախելով մի տանիր, եթէ չես ուզեր որ դուն ալ տարուիս այդպէս:

(3) Երբեք քար մի նետեր այն անվաս կենդանիներուն, գորտերուն, եթէ չես ուզեր որ քեզի քարեր նետուին նոյն կերպով:

(4) Միտք բեր թէ՝ գրեթէ բոլոր օձերն ալ անվաս են եւ օգտակար :

(5) Հողի որդերը, գետնի ճճիները անվաս են եւ շատ օգտակար : Երբ զանոնք գործածես ձուկ որսալու համար, նախ պէտք է որ զանոնք սպաննես իսկոյն, աման մը եռացած ջուրի մէջ խոթելով :

(6) Մեծ անգիտութիւն է ձուկը ապակի գունտերու մէջ պահել, ուր կամաց կամաց մեռնի :

(7) Գթութեան գործ է թոչունները կերակրել ձմեռուան մէջ :

Նաեւ ձիերու վրայ

(8) Զիերուն բերանը երբեք պէտք չէ սանձ դնել ցուրտ եղանակի մէջ առանց նախ տաքցնելու սանձը:

(9) Անգիտութիւն է սանձը ցնցել երբ կենդանին ջուր կը խմէ :

(10) Երբ ձիդ օտար ախոռ դրուի, պէտք է որ միշտ վստահ ըլլաս թէ անիկա պատշաճօրէն կը կերակրուի եւ

ջուր կը տրուի՞ անոր, եւ ցուրտ եղանակին անոր վրայ յարմար վերմակ կը դրուի՞:

(11) Պէտք չէ որ հեծնես կամ կառքի գործածես խեղճ երեւոյթով ձի մը, երբ կարելի է: Միշտ նայէ ձիուն վրայ, եւ մի նստիր ձի մը որ խեղճ երեւոյթ ունի, կամ ձի մը որուն գլուխը կը ձգտուի պինդ պրկիչ սանձով:

(12) Միշտ պէտք է որ +ապուրութեամբ իօնիս մունջ ամէն կենդանիի:

(13) Պէտք է որ միշտ այնպէս վարուիս ամէն մունջ արարածի հետ, ինչպէս պիտի ուզէիր որ ուրիշներ քեզի հետ վարուէին եթէ այդ արարածին տեղն ըլլայիր:

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

[Ուրիշ հարցումներ ալ ընեն ուսուցիչները]

(1) Ի՞նչ կ'ըսուի թիթեռնիկներու և ուրիշ միջատաներու մարմնին մէջ գնդաւեղ խոթելու վրայ:

(2) Ի՞նչ կ'ըսուի հաւերը գլուխները կախ վիճակի մէջ տանելու վրայ:

(3) Ի՞նչ կ'ըսուի գորտերու քար նետելու վրայ:

(4) Ի՞նչ կ'ըսուի օձերու վրայ:

(5) Ի՞նչ կ'ըսուի հողի ճճիներուն վրայ:

(6) Ի՞նչ կ'ըսուի ապակի գունտերու մէջ ձուկ պահելու վրայ:

(7) Ի՞նչ կ'ըսուի ձմեռուան մէջ թռչուններ կերակրելու վրայ:

(8) Ի՞նչ կ'ըսուի ձիերուն սանձերուն վրայ ցուրտ եղանակներու մէջ:

(9) Ի՞նչ կ'ըսուի ձիուն սանձը ցնցելու վրայ զանիկա վարելու ատեն:

(10) Երբ քու ձիղ օտար ախոռ դրուի , ի՞նչ բաներու վստահ ըլլալու ես :

(11) Ի՞նչ կ'ըսուի խեղճ երեւոյթ ունեցող ձիով ճամարորդելու վրայ :

(12) Ի՞նչ կ'ըսուի մունջ արարածներու խօսելու վրայ :

(13) Ի՞նչպէս պէտք է վարուիս ոևէ մունջ արարածի հետ :

ԻՄ ԴԵՂՁԱՆԻԿԱ

Մինչ կը գրեմ այս Դասերը , Պալթիմորէ տիկին մը կը խնդրէ ինծմէ բան մը ըսել վանդակի մէջ փակուած դեղձանիկներու համար , որոնք կը թողուին տաք արելին մէջ եւ կը նեղուին :

Կը հաւատամ թէ վանդակի մէջ փակուած թոշունի մը ցուցուած անգթութիւնը մեղք է Աստուծոյ առջեւ , եւ եթէ անոնք որ զայդ կ'ընեն , կամ կը թոյլատրեն , տեղ մը պատասխանատու չեն , չկայ ուրեմն արդարութիւն կոչուած բանը :

Ինչպէս ասկէ առաջ ըսած եմ այս Դասերուն մէջ , ես ունիմ դեղձանիկ մը : Ես զանիկա չեմ տար հազար տոլարի փոխարէն եթէ պիտի չկրնամ ուրիշ մը ձեռք բերել : Ես թոյլ կու տամ անոր թոչիլ մեր սենեակներուն մէջ օրը քանի մը ժամ : Զանիկա անօթի չեմ թողուր խեղճ թոչնակերով (գուշ եէմի) : Կը կերակրեմ զանիկա այն բաներով զորոնք կը կարծեմ թէ կը սիրէ ուտել , զոր օրինակ , վար տեսակէ հացի փշրանք , եւ միշտ քաքար (պաքցամատ) մը անոր վանդակին մէջ , պտուղներ , հազար (մարուլ) , ոեւէ բան , որմէ , կը կարծեմ թէ պիտի ախորժի

թռչուն մը, եւ ան կ'առնէ, ուրիշ արարածներու նման, ճիշդ որն որ կը սիրէ, եւ կը մերժէ ինչ որ չի սիրեր, եւ է կայտառ եւ զօրաւոր եւ երջանիկ, որչափ կրնայ ըլլալ թռչուն մը: Երեք տարի է որ քովս է: Կը խաղայ ինծի հետ, կուգայ մատերուս, ուսերուս եւ գլխիս: Կը հալածեմ զինք, եւ ինք կը հալածէ զիս եւ յաղթութեան պղտիկ երգեր կ'երգէ երբ չեմ յաջողիր բոնել զինք: Երբեք չեմ թողուր զանիկա տաք արեւին մէջ: Երբեք չեմ կախեր անոր վանդակը տաք սենեակի մէջ որպէս զի չնեղուի: Երբեք չեմ դներ զանիկա ցուրտ սենեակի մէջ, որպէս զի չմսի: Եթէ տըխրի, ես ալ կը տխրիմ, եւ եթէ հիւանդանայ եւ մեռնի, ես աւելի արցունք կը թափեմ քան զոր կը թափեմ այնպիսի ներու վրայ որոնք գէշ կը վարուին փոքրիկ թռչուններու եւ մունջ կոչուած ուրիշ արարածներու հետ: Զանիկա շատ երջանիկ կ'ընեմ վանդակին մէջ գտնուած ատենը, անոր տալով պղտիկ հայելի մը, զոր այնպէս կը կախեմ որ արեւ կամ լոյսեր չշլացնեն զայն: Երբ ուզեմ որ դադրի երգելէ, միշտ կու տամ հայելին, եւ անիկա կը կայնի եւ ժամերով կը նայի իր գեղեցիկ անձին վրայ եւ կատարելապէս հանդարտ կը կենայ:

Իր առաւտեան շնորհակալութեան զուարթ երգը կ'երգէ, եւ ճիշդ արեւամուտէն առաջ՝ իր երեկոյեան երգը, եւ երբեմն աւելի ուշ կը լսեմ անոր մեղմ, անոյշ խազերը, իբր թէ ըսէր իր փոքրիկ աղօթքները իր եւ իմ Արարշիս:

Ինչպէս որ կը հաւատամ ամենագէտ Աստուծոյ մը, առանց որու գիտութեան ճնճղուկ մը գետին չինար, նոյնպէս կը հաւատամ թէ պատասխանատու պիտի բըռնուիմ երջանկութեանն ու ապերջանկութեանն համար

զոր կրնամ բերել այս թոշնական փոքրիկ կեանքին զոր
Աստուած մարդասիրաբար տուած է իմ կեանքս աւելի
երջանիկ ընելու համար :

Տ. Թ. Ա. Ն. Հ.

Դրած բլլալով վաճակի բռչուններու վրայ, այս
Դասերը կարդացողներուն պիտի բսեմ պատմութիւն մը
վայրի բռչուններուն վրայ, զոր կը փափաքիմ որ կար-
դայ ամեն տղայ .

ԿԱՐՁ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՐՁ ԽՈՍՔԵՐՈՎ,
ԱՄԷՆ ՀԱՍԱԿ ՏՆՈՑ ՀԱՄԱՐ

Ք Ա Զ Ն Շ Ա Ն Ա Ռ Ո Ւ Ի Մ Ը

Ժամանակաւ կար տղայ մը որ լաւ նշան առնող էր
քարով կամ նետով կամ հրացանով կամ այս կարգէ ոեւէ
բանով : Ուստի ամէն օր կը պտըտէր եւ նշան կ'առնէր
ամէն բանի որ առջեւը կ'ելլէր : Մինչեւ իսկ ճաշած ատե-
նը կը մտածէր լաւ նշան առնելու վրայ ժամացոյցին,
կամ կատուին, կամ պատին վրայի ճանճին, կամ ոեւէ բա-
նի զոր կը տեսնէր ըստ պատահման :

Իր բնակած տեղին մօտ կար փոքրիկ նուշն մը որ
ունէր բոյն մը եւ հինգ փոքրիկ ձագեր : Թոչունը ստիպ-
ուած էր սաստիկ աշխատիլ փոքրիկ գլուխներու մէջ՝ եւ
միշտ ուտելիքի համար լայն բացուած բերաններու հա-
մար : Արշալոյսէն մինչեւ գիշեր թոչունը կը թոչտէր հոս
ու հոն արտերու, անտառներու եւ ճամբաններու վրայ,
ժողվելու համար որդեր, ճանճեր, միջատներ եւ սերմեր,
եւ այնպիսի բաներ, որոնք, թոչունը գիտէր թէ, աղէկ

էին իր ձագերուն համար : Շատ զարմանալի էր թէ որ-
չափ մեծ քանակութեամբ կերակուր կրնային ուտել այդ
հինգ փոքրիկները : Ինչ որ թոշունը կը բերէր ամէն օր,
այդ բոյնը կրնար լեցնել ամբողջ մինչեւ գագաթը , եւ
սակայն անոնք ամէնն ալ կ'ուտէին եւ նորէն կ'ուգէին յա-
ջորդ առաւտ լուսնալէն առաջ : Թէեւ գործը այսպէս
դժուար էր , սակայն թոշունը ուրախութեամբ կը կատա-
րէր զայն , եւ օր ըստ օրէ կ'երթար միշտ թոշելով զուարթ
ճռուողինով եւ ետ կու զար իր բերանը տեսակ մը ու-
տելիքով : Եւ թէպէտ ինք շատ չէր ուտեր բաց ի այն մա-
սէն որ իր կտուցին կը փակչէր զանոնք կերակրելէ ետեւ ,
եւ սակայն զանոնք երբեք անօթի չէր թողուր , ոչ մինչեւ
անգամ անոնց ամէնէն պզտիկը եւ ամէնէն տկարը : Այս
պզտիկ ձագը չէր կրնար այնպէս բարձրաձայն կեր ինդ-
րել ինչպէս միւս ձագերը , բայց միշտ ամէնէն առաջ կը
կերակրուէր : Օր մը երբ թոշունը որդ մը բռնած էր կտու-
ցովը , եւ վայրկեան մը պատին վրայ թառած էր իր բոյնը
թոշելէն առաջ , քաջ նշան առնողը տեսաւ զանիկա , եւ
բնապէս անոր ուղղեց նետը եւ վիրաւորեց զանիկա կուշ-
տէն : Թոշունը ծանրապէս վիրաւորուած էր եւ սաստիկ
ցաւ կը զգար , սակայն թոշտեցաւ եւ կաղալով քաշուե-
ցաւ ծառին ոտքը որուն վրայ կը գտնուէր իր բոյնը , վա-
սըն զի թեւը կոտրած էր : Քիչ մը ճռուողեց եւ ձագերը կը
լսէին անոր ձայնը , եւ որովհետեւ անօթի էին , իրենք ալ
ճռուողեցին բարձրաձայն : Մայր թոշունը կը ճանչնար
անոնց բոլոր ձայները , մինչեւ իսկ ամէնէն պզտիկին
տկար ձայնը : Բայց չէր կրնար վեր ելլել անոնց քով , մինչեւ
իսկ չէր կրնար ըսել թէ ինչո՞ւ չէր գար : Եւ երբ լսեց ձա-

գերուն ձայները , նորէն ջանաց ելլել , բայց այդ պատճառաւ միայն անոր թեւերէն մէկը շարժեցաւ եւ ատով անիկա դարձաւ կոտրած թեւին կողմը : Օրուան մնացած բոլոր մասին մէջ փոքրիկ մայրը մնաց հոն , եւ երբ ձայն կը հանէր , ձագերը կը պատասխանէին անոր , եւ երբ անոնք ձայն կը հանէին , ան կը պատասխանէր : Յետոյ բոլորովին անշարժ կեցաւ : Բայց անոր ձայնը հետզհետէ տկարացաւ , եւ այն օրը ուշ ատեն ձագերը այլ եւս կարող չեղան լսել զայն , բայց ան տակաւին կրնար լսել անոնց ձայնը : Գիշերը մեռաւ մայր թուչունը , եւ առաւտուն հոն կը պառկէր բոլորովին պաղած եւ փայտ կտրած , իր աղօտ աչքերը տակաւին ուղղուած վեր՝ բոյնին ուր իր ձագերը կը մեռնէին անօթութենէ : Բայց ասոնք այնքան շուտով չմեռան : Ամբողջ ցերեկը քնացան , մինչեւ որ իրենց անօթութիւնը արթնցուց զիրենք , եւ այն ատեն կանչեցին , ճուացին , մինչեւ որ այնչափ յոգնեցան որ նորէն քնացան : Եւ յաջորդ գիշերը շատ ցուրտ էր , եւ անոնք իրենց մօր տաքուկ կուրծքը կը փնտուէին , եւ արշալոյսէն առաջ ամէնն ալ մեռան իրարու ետեւէ , բաց ի ամէնէն պղտիկէն , որ բոյնին մէջ , վարը ամէնէն խորը , կը գտնուէր : Առաւտուն իր գլուխը վեր , ցուց եւ բացաւ իր դեղին բերանը կերակրուելու համար , բայց չկար մէկը որ կերակրէր զանիկա , եւ ուստի ան ալ մեռաւ վերջապէս , բերանը լայն բացուած եւ պարապ , եւ այսպէս այն քաջ նշանառուն վեց թուչուններ սպաննեց մէկ հարուածով , մայր թոչնիկը եւ անոր հինգ ձագերը : Չէք խորհիր թէ անիկա անգութ տղայ մըն է : Դուք ալ պիտի ուգէիք նոյնն ընել : Եթէ կը ճանչնաք այդ տղան ,

Հաճեցէք անոր կարդալ այս փոքրիկ պատմութիւնը : Թե-
րես պիտի ուզէ լսել ասիկա :

ԻՆՉՈ՞Ւ ՔԱՂՑՐՈՒԹԻՒՆ ՑՈՒՑՆԵԼՈՒ ԵՆՔ ՍՏՈՐԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ

1. Հանրային առողջութիւնը կը պահանջէ քաղցր
վարմունք ցուցնել անոնց, որպէս զի մեզի տան առող-
ջարար միս եւ կաթ, եւ կաթի արտադրութիւնները՝ որոնք
թունաւոր չըլլան :

2. Երկրագործութիւնը կը պահանջէ պաշտպանել
մեր միջատակեր թուչունները եւ անոնց բոյները :

3. Երախտագիտութիւնը կը պահանջէ զայդ, անոնց
մատուցած ծառայութիւններուն համար, եւ երջանկու-
թեան համար զոր անոնք կը բերեն մեր կեանքերուն մէջ :

4. Զայն կը պահանջէ պարտականութիւնն առ Աստ-
ուած, որ զանոնք ստեղծեց եւ մեզի տուաւ :

5. Վասն զի ատիկա կ'աւելցնէ իւրաքանչիւր մարդ-
կային էակի երջանկութիւնը, ստորին կենդանիներուն
հանդէպ սիրոյ կեանքի եւ քաղցր ըլլալու միջոցաւ :

6. Վասն զի այլ եւ այլ ազգերու բազմաթիւ դըպ-
րոցներուն մէջ փորձուած եւ հաստատուած է թէ անոնք
որոնց կը սորվեցուի միշտ քաղցր ըլլալ ստորին ցեղէ
կենդանիներու, — թուչունները կերակրել, ձիերը շոյել,
քաղցրութեամբ խօսիլ բոլոր զգայուն արարածներուն
եւն . հետ, — կեանքի բոլոր յարաբերութիւններուն մէջ
աւելի աղէկ մարդիկ եւ կինսեր կ'ըլլան :

Ի՞նքո՞ս կաջսելու է “ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԱԿՈՒՄԲ., ՄԸ
ՈԵՒԷ ԴՊՐՈՑԻ ՄԷԶ ԿԱՄ ՈՒՐԻՇ ՏԵՂ

Նիւթին վրայ խօսուելէ ետեւ սապէս կամ նման
որոշում մը տրուի .

Որոշուեցաւ որ Գթասրտութեան Ակումբ մը կազ-
մենք, որ կոչուի

Ո ւ ո ւ ս ո ւ ն ե ս ո ւ ն Ա կ ո ւ ս ո ւ ն

ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ. Նախագահ, եւ եթէ ուզուի, նա-
եւ Քարտուղար եւ Գանձապետ, եւ եթէ ուզուի, Գոր-
ծադիր Յանձնախումբ մը: Ժողովներ գումարուին ամիսն
անգամ մը կամ աւելի յաճախ, երեկոյին կամ կէսօրէն
ետքը կամ իբրեւ մաս դպրոցի կամ կիրակնօրեայ դպրո-
ցի պաշտամունքի: Հրահանգներ ըլլան այնպէս ինչպէս
պաշտօնեաները կ'որոշեն, որոնց մէջ կրնան տեղի ունե-
նալ երաժշտութիւն, ընթերցումներ, արտասանութիւն-
ներ, մանրավէպներ կամ ուղերձներ, նիւթ ունենալով
քաղցրութիւն հանդէպ ԱՄԷՆՈՒԻՆ, եւ մամնաւորապէս
մունջ արարածներու, ակնկալելով թէ մանուկներու եւ
բոլոր ներկայ գտնուողներուն վրայ պիտի տպաւորուի
Աստուծոյ սէրը եւ բարութիւնը կենդանական արարչա-
գործութեան մէջ, մեր պարտականութիւնը հանդէպ ա-
նոնց եւ երախտագիտութիւն զոր պարտիմք ունենալ:
Առէք փոքր տոմար մը, որուն մէջ պահէք անդամներուն
անունները եւ հասցէները:

Ծ Ա Խ Ք Ը

Ծախք պէտք չէ «Ողորմութեան Ակումբ» մը կազմելու համար։ Ամէն ինչ որ կը պահանջուի սա պարզ պիտակն է։

«Ես պիտի ջանամ քաղցր ըլլալ բոլոր ԱնվնԱՍ ապրող արարածներու, եւ պիտի ջանամ պաշտպանել զանոնք անգթաբար գործածուելէ։»

Այս կրնայ գրուիլ յուշատետրի մը մէջ եւ նպատակն է երջանիկ ընել ինչպէս Հայոց նմանապէս Տարբեյան արարածները։

Ոեւէ մէկը կրնայ անդամ ըլլալ առնելով վերի պիտակը հրապարակաւ կամ առանձնակի։ Ո՛չ ձեւակերպութիւն եւ ոչ վարձ կը պահանջուի։

ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ԿԱՐԳԸ

Ժողովներու համար հրահանգներու հետագայ կարգը որդեգրուած է։

1. Երգել Ողորմութեան Ակումբի երգը, և միասին կրկնել պիտակը։

2. Դիտողութիւններ Նախագահէն և նախորդ ժողովին տեղեկագրին ընթերցումը Քարտուղարէն։

3. Ընթերցում, արտասանութիւններ, «Յիշողութեան Գոհարներ», և մանրավէպներ թէ մարդկային և թէ մունջ արարածներու համդէպ բարի և աղնիւ խօսքերու և գործերու վրայ, նաև ձայնական և գործիական երաժշտութիւն։

4. Երգել Ողորմութեան Ակումբին երգը :
5. Կարճ ուղերձներ : Անդամները այն ատեն կրնան պատմել թէ ի՞նչ ըրած են աւելի երջանիկ և աւելի բարի ընելու համար մարդկային և մունջ արարածներ :
6. Նոր անդամներու ընդունելութիւն :
7. Երգել Ողորմութեան Ակումբին փակման երգը :

Վ Ե Ւ Զ

2015

6-48

